

Universitäts- und Landesbibliothek Bonn

Storagrowth iwn h çakawor meci uxtin ayrivanay srboyn gełarday


handerj patmakan canōt oweambk

Mxit'areanc', Step'annos Vardapet

Vałaršapat, 1873

urn:nbn:de:hbz:5:1-9718

Goussen 3433





ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈՉԵԿԱՆՈՐ ՄԵԾԻ ՈՒԽՏԻՆ

ԱՅՐԻ ՎԱՆԱՅ

ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ

ՀԱՆԿԵՐՉ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎՆՕՔՈՒԹԵԱՄԹԳ

ԱՆՈՒՍԱՍԻՐԵԱՅ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԵՊԵՏ ՄԻԹԵՐԵԱՆՅ

ՄԻՈՐԱՆ ՍՐԲՈՅ ՄԱՅՐ ԱՔՈՒՈՍՈ ԷԶՄԱՍԵՆԻ



ՀՐԵՏԱՐԵԿԵԱՅ


ԱՐԳԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՅ

Ի ՎԱՂԱՐՉԵՊԵՏ

Ի ՏՊԵՐԸՆԻ ՍՐԲՈՅ ԿԸԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

1873 — Ո՛ՅԻԳ՛

3435



ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈՉԱԿԱՒՈՐ ՄԵԺԻ ՈՒՍՏԻՆ

ԱՅՐԻ ՎԱՆԱՅ

ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ

ՀԱՆԳԵՐՉ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄՐՔ

ԱՆԻԱՏԱՍԻՐԵԱՅ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԻԹԱՐԵԱՆՑ

ՄԻԱԲԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՑՍ ԷԶՄԻԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱՅ

ԱՐԳԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԸԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԺՆԻ

Ի ՎԱՂԱՐՉԱՊԵՏ

1873 — ՈՒՅԻԳ՝

3430

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԵՈՐԳԵԱՅ Դ.

ՊԵՃՔՆԵՐ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՀՐԱՏԱՐԱԿԶԻ ԿՈՂՄԻՑ

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆԳՈՎ

ԻՒՐ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

Արջանկայիշատակ մեր պանծալի նախ-
նեաց անցեալ տխո՛ւր յիշատակարաննե-
րը՝ ամեն մի մտածող անհատ ականա-
տես լինելուն պէս կըսկսի իւր մտքի մէջ,
փոքր առ փոքր մի առանձին վերացական
նշմարողութիւն տիրել, մինչև որ՝ կըսկսի իւր
սիրտը ճմլել և մի խո՛ր երևակայութեան
մէջ ընկղմել. որովհետև մեր երանելի նախ-
նիքը՝ աշխարհիս մէջ գեղեցիկ հեռատեսու-
թեամբ՝ ամեն բան կատարելով մեր Ազ-
գի համար, ամեն տեսակ անձնական զո-
հաբերութիւններ անելով՝ սկսել են յետոյ՝
թողնել ապագայիս համար, դարուց ի դարս
ամենայն տեսակ սրտամաշ, սրտատոչոր և
աղետալի յիշատակարաններ, սկսեալ ամե-
նաշքեղ և զարմանալի յօրինուածովք ա-
պարանք՝ դարպասք՝ պալատք՝ անհամար
վանորայք, մենաստանք, տաճարք և ըն . . .

որոնց սքանչելի քանդակագործութիւնքը, և գեղեցիկ շինուածքը՝ ամբողջովն միանգամայն ոչ թէ մի միայն Հայերիս ուշադրութիւնը, այլ և նոյն իսկ Աւրոպացի ճանապարհորդաց, գիտնականների քննողական խորին ուշադրութիւնը:

Ամեն մի նուիրական տեղ՝ ունի իւր ձգտողական երևակայութիւնը, ամեն մի նուիրական վէճ՝ ունի իւր առանձին խոր տխրութիւնը, ամեն մի դաշտ՝ որի վերայ Հայրենեաց սիրոյ՝ և ուղղափառ սրբազան Արօնի համար պատերազմել են մեր երանելի քաջերը՝ ունի իւր կողմնական, առանձին ցաւակցական տխուր տեսարանը . . . ամեն այն քարանձաւք՝ որոնց ձորերի միջոցաւ գնում են կարկաջահոս խոխոջիւն գետերը՝ ունին իրենց առանձնապէս զմայլեցուցիչ տեսարանը . . . :

Մենք իրաւամբ ենք ասում մեր նախնեաց՝ պանծալի, երջանկայելապալի, և երանելի. վասն զի եթէ մեր անձնանուէր, գեղեցիկ ցեղէն Հայրենեաց սիրոյ համար մտածող նախնիքը, հեռատեսութեամբ չըշինէին վանքերը, մենաստանները, և ըն. և ըն. համարձակվումեմ ասել՝ որ մեր ջարդուփշուր եղած Ազգը, մինչև օրս չէր կարող հանդիսանալ այսքան քանակութեամբ, մեր ուղղափառ սրբազան

Արօնիս աստուծոյ Տիմանց և սկզբունքի վերայ
 ճշմարիտ Հայ. որովհետև ամեն մի բըռ-
 նակալ իշխանութիւն՝ երբ մի փոքր յա-
 ռաջ էր գալիս՝ սկսումէր իսկոյն մեր խըղ-
 ճոճ Հայ եղբայրներին՝ համոզելով և ճըն-
 շելով՝ հաւատափոխ անել, խոստանալով
 նախապէս՝ մեծամեծ պարգևներ, իսկ յե-
 տոյ՝ սոսկալի տանջանք: — Իայց այս ամեն
 անտանելի միջոցների քայլափոխում, երբ
 մի հայեացք էին ձգում խեղճերը իրենց
 շուրջը, — ի՞նչ էին տեսնում, ո՞վ Հայեր—
 տեսնում էին յանկարծ լեռների, դաշտերի,
 անտառների, քաղաքների, գիւղերի և քա-
 րանձառների միջից բարձրացած վանքերի և
 եկեղեցիների գեղեցիկ գմբէթներ, որոնք՝
 կարծես թէ, հաղորդելով ասումէին մեղ-
 մօրէն. «Ա՛խ իմ դաւակոնքս, չէ՞ թէ իմ
 «ճոցից ծնած՝ իմ կաթովս մեծացած՝ և
 «իմ գրկումս պահուած էք, այժմ ո՞ւր էք
 «կամենում գնալ, օտար մօր գիրկ . . .
 «վայ՛ ձեզ, ապերախտ որդիք Հայաստանի
 . . . »: Ահա այս երեւակայական մայրա-
 կան գթալի բողոքը, ակնթարթ առ ակն-
 թարթ սկսումէրնոցա խիղճը ճմլել . . .
 և վերջապէս՝ սրտները քաջացնել, մինչև
 որ պատրաստ էին՝ Հայրենեաց սիրոյ և
 Արբազան Արօնիս համար՝ տանել ողորմե-

լիբը՝ ամեն տեսակ վե՛շտքը, տառապա՛նքը,
և նեղութիւնքը:

Ա՛հա, իմ պատուական ընթերցողք,
տեսաք՝ թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունի
Ազգիս համար՝ մեր նախնեաց այսպիսի ան-
գին յիշատակարանները, որ ամենայն մի
Հայի սրտի մէջ արձանացրել են նախնեաց
ազգային հարուստ յիշատակարանները, վե-
հանճն քաջութիւն, և անյաղթելի՛ արի-
ութիւն, որոնք՝ ամեն մի անձնական զո-
հաբերութիւնք սրտի հաճութեամբ յանճն
առած են և կատարած, որ ո՛չ մի աշխար-
հային երկիւղ չէ կարողացել յաղթելու
նոցա անձնասիրութեան, ո՛չ հե՛ւր՝ ո՛չ ջո՛ւր
և ո՛չ մի ամենասոսկալի տանջանք:

Ա՛հա այսպիսի ճշմարիտ ազգասիրու-
թեան ընթացքով՝ բոլոր իւրեանց շրջան-
ներում՝ միշտ մնացել են անձնանուէր, հա-
րազատ և ճշմարիտ Հայ. որոնց մաքուր
և անխիւ արեան սերընդից յառաջացած
եմք մենք երկրագնտիս վերայ՝ ամբողջ Հա-
յերս. — բայց եղո՛ւկ անարժան և անմտա-
ծող թոռներիս օրին:

Միշտ պէտք է ինկատի ունենալ՝ որ մե-
զապիսի հին Ազգերը յառաջ են գալիս ի-
րենց հին ու հարուստ յիշատակարաններով,
և ապրում են ու մնում նոյնպէս նոցանով: —

Բայց շատ ցաւալի է տեսնել, այս Հայ-
րենեաց փրկութեան սքանչելի յիշատակա-
րանների համար, որ ամբողջ Արարատեան
աշխարհի կեդրոնի մէջ անգամ մեր Հայ
եղբայրների ամենամեծ մասը, դեռ չգիտեն
իրենց սրբազան և խնկելի յիշատակարան-
ների վերայ գոնէ մի տեղեկութիւն, որ պա-
հանջած ժամանակին՝ դէմ կենային օտար
ազգաց խոչընդոտ խօսքերի առաջ:

Եւ ահա այս առիթով ստիպուած՝ և
մեր եռանդին ու նպատակին համաձայն՝
այս մեր ազգային պարծանաց խնկելի յի-
շատակարաններից՝ այժմ հանդիսանումէ
մեր սիրական Հայոց Ազգի առաջ՝ «Ստո-
րագրութիւնն Ա. յրի վանաց Սրբոյն Գե-
ղարդայ, հանդերձ հետաքրքրական պատ-
մական ծանօթութեամբք»:

Այս աշխարհ ձգելով ահա այս պա-
տուական աշխատասիրութիւնը՝ և ընծա-
յելով մեր ի բոլոր սրտէ սիրելի Հայրե-
նակցաց՝ հարկաւոր ենք համարում այս գրքի
մասին ասել մի երկու խօսք. — որ այս գիր-
քը՝ «Ստորագրութիւնն Ա. յրի վանաց Ս. Գե-
ղարդայ», ունի իւր մէջ պատմագրու-
թեան մի գեղեցիկ ոճ՝ որ ամենայն մի ըն-
թերցող Հայ՝ դիւրին կերպով կհասկանայ
գրուածքը և կտայ քաղցրութիւն շարու-

13

13

նակելու մինչև վերջը. — գրքիս՝ «Տեսաբար-
քրական պատմական ծանօթութիւնքը»*)
ևս, զարդարելով բարձրացնում են գրքի ար-
ժանաւորութիւնը, որ ամեն մի մտածող
Հայու համար մե՛ծ նշանակութիւն ունի
և այս մասը, (ինչպէս կնկատեն մեր սիրե-
լի ընթերցասէր Հայ եղբայրները):

Սքանչացէք ուրեմն՝ ով մտածող, զգա-
յուն, ազնիւ Հայեր, մեր արժանայիշատակ
նախնեաց՝ մեծահասակ գործերի և ընթաց-
քի վերայ. — նայեցէք այն մեծամեծ պար-
զւենների և յիշատակարանների վերայ, որոնք
նուիրուել են բոլորը թագաւորական պայա-
զատ ցեղերից, — դարձրէք իմ եղբայրներ,
Ձեր խորին ուշադրութիւնը, և տեսէք այն
վիճափոր եկեղեցիների վերայ վերջին աստի-
ճանի զարմանալի աշխատասիրութիւն ու-
նենալը:

Վերջապէս՝ ահա՛ այսօր մեր Նղգային
գրականութեան մէջ մտաւ և այս գիրքը.
որով Հայութեան գանձարանը մի գեղե-
ցիկ մատենագրութեամբ ևս հարստացաւ:

Մեր, առհասարակ բաժանորդագրու-
թեամբ հրատարակելու գլխաւոր և բուն

(*) Գրքիս ծանօթութիւնքը նոյն երեսի մէջ տպելու անարմար
լինելու պատճառաւ՝ տպուեցաւ առանձին՝ գրքի վերջը:

նպատակն է, (ինչպէս յայտնի է մերազնեայ շատերին*), որ կարելի եղածին չափ, փութով մտցնել մեր հրատարակութիւնը՝ մեր իրաւատէր խեղճ հասարակութեան մէջ:

Արժան ենք համարում, մեծաւ ուրախութեամբ յայտնել մեր ամենասիրելի Հայ եղբայրներին և քոյրերին՝ որ մեր հրատարակած «Արջանկայիչատակ Դաւիթ բէկի» պատմութեան համար, բարեբաղդաբար զանազան տեղերից քանի քանի շնորհակալութեան նամակներ ընդունեցինք, ընդունեցինք նա ևս՝ առանձնակի գոհունակութիւն և քաջալերութիւն՝ Ազգիս աշխատասէր և մտածող անհատներից, մեր Յառաջաբանութեան ԺԱ. երեսի համար, հանդերձ ծանօթութեամբ:

Ա երջին տողերիս հետ, ահա՛ շտապում ենք յայտնելու սիրելի Հայրենակցացս՝ մեր սրտի խորին զգացմամբ ջերմ շնորհակալութիւնները, այն Հայրենասէր և վեհ պարօններին, որոնք անկեղծութեամբ պատուելով թէ՛ մեզ՝ և թէ՛ մեր ձեռնարկը՝ փութացան ստորագրել տալ մեծարգոյ բաժանորդաց՝ սրտի հաճութեամբ ընդու-

(*) Տեսնելով Դաւիթ բէկի Յառաջաբանութեան ԺԱ երեսը հանդերձ ծանօթութեամբ:

ներով մեր վստահութեամբ ուղարկած յայ-
 տարարութեան թերթերը՝ յԱղէքսանդ-
 րապօլ՝ Գերապատիւ Սրբազան Եղափի-
 րեանց Գրիգոր Եպիսկոպոս Հօրը, Գե-
 րազնիւ Սիրական աղա Գօրոյեանցին՝ և
 Մեծապատիւ Պ. Եւետիք Նալեանցին, յԱ-
 խալցիսա՝ Մեծապատիւ Պ. Ստեփաննոս Երա-
 բաջեանցին, յԱստրախան՝ Բարեկրօն Յով-
 սէփ Ե. Քաջանայ Բունիաթեանցին և Մե-
 ծապատիւ Պ. Ստեփաննոս Զանուժեանցին,
 յԱռինջ գիւղն՝ Բարեկրօն Յովակիմ Քա-
 ճանայ Եւաքելեանցին, յԱգուլիս՝ Մեծա-
 պատիւ Պ. Ներսէս Սիմէօնեանցին, ի Բա-
 գու՝ Բարեկրօն Թադէոս Ե. Քաջանայ
 Բուդաղեանցին՝ և Մեծապատիւ Պ. Յա-
 բէթ Տէր Յակօբեանցին, ի Դաւրէժ՝ Մե-
 ծապատիւ Պ. Համբարձում Եւաքելեան-
 ցին, ի Դարբանտ՝ Մեծապատիւ Պ. Համ-
 բարձում Եթարէզեանցին, յԱրևան՝ Մե-
 ծապատիւք Պ. Յակօբ Տէր Յովսէփեան-
 ցին և Պ. Յովճաննէս Բէզզատեանցին, ի
 Զակաթալա՝ Մեծապատիւ Պ. Միքայէլ
 Քոչարեանցին, յԱգղիբ գիւղն՝ Մեծապա-
 տիւ Պ. Լևոն Տէր Յարութիւնեանցին, ի
 Կողպ գիւղն՝ Մեծապատիւք Պ. Պօղոս Մե-
 լիք Դատայեանցին՝ և Պ. Հուրճերին, ի
 Ղուբայ՝ Մեծապատիւք Պ. Ենտօն Մելիք

Դատայեանցին և Պ. Յօնան Տէր Յովսէփեանցին, ի Մողղոկ՝ Բարեկրօն Թաղէոս Լ. Քաջանայ Խոսրովեանցին, ի Մեծ Ղարաքիլիս գիւղն՝ Բարեկրօն Երսէն Քաջանայ Տէր Սիմէոնեանցին, ի Նուխի՝ Երժանապատիւ Հայր Արթանէս Արղապետ Մուրատեանցին, ի Նախիջևան Հին՝ Երժանապատիւ Հայր Թաղէոս Արղապետ Տէր Դանիէլեանցին, ի Նորգ (քաղաքամասն Երևանայ)՝ Մեծապատիւ Պ. Բաղդասար Տէր Յովհաննէսեանցին, ի Նոր Բայազիդ՝ Գերազնիւ Բարսեղ աղա Երծրունոյն, ի Սանկտ Պետերբուրգ՝ Խաչատուր Սարկաւազ Խանթարճեանցին, ի Սաւուխ Պուլխի՝ Մեծապատիւ Պ. Հեթում Ղէլալեանցին, ի Անն՝ Մեծապատիւ Պ. Նաղարէթ Եռաւեղեանցին, ի Տփլիս Բարեկրօն Ղազարոս Եւազ Քաջանայ ՊալիգալՓայեանցին, և Մեծապատիւք Պ. Մարտիրոս Պօղարճեանցին և Պ. Համբարձում Մ. Հ. Բաբաջանեանցին, ի Քանաքեռ գիւղն՝ Բարեկրօն Ներսէս Քաջանայ Տէր Մանուէլեանցին:

Բաղդաւոր կհամարիմ զիս եթէ այս մեր Երրորդ ձեռնարկեալ հրատարակութիւնը ևս՝ մեր Հայութեան խմբին, առհասարակ օգտակար և ընդունելի լինի որով ա-


ւելի ևս քաջալերուելով՝ կըսկսինք լոյս աշխարհ ձգել և հրատարակել, մեր ընդհանուր Հայոց օգտի համար և միւս պիտանացու աշխատութիւնները, որոնց համար ճշմարիտ եռանդով և սրտով՝ հայցումենք ու աղօթում՝ դէպի Ամենաբարձրեալ Կալը՝ որ նոցա քայլերը միշտ ու հանապազարագութեամբ ընթանան, և դէպի լուսաւորութիւն դիմեն:

Ճշմարիտ Հայութեան զգացմամբ սեղմելով Ազգիս հաւատարիմ Անդամոց ձեռքը՝ մնամ միշտ սիրող և յարգող նոցա

ԱՔԳԱՐ Ս. ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑ.

Ի 1875 Մարտի 1875 -ի

ՅԵՐԵՒԱՆ.





Ի ՍԳԱԼԻ ՄԱՀՆ

ԱՐՏԱՍՈՒԵԼԻՈՅ ՄՕՐ ԻՒՐՈՅ

ՀՈՒՓՍԻՄԷԻ

ՅԻՇԱՏԱԿ ՄԱՀԱՐՉԱՆԻ

ՆՈՒԻՐԷ ԱՐՏԱՍՈՒՑԷ

Զայս դոյզն երկասիրուքիւն, որդի նորա հարազտ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻԹԱՐԵԱՆ



LIBRARY

UNIVERSITY OF TORONTO

1827-1828

THE UNIVERSITY OF TORONTO LIBRARY
1827-1828

Ոչ ի կարծ ընդհատուցեալ եւ ոչ
ի յար զարթուցեալ, այլ եւ ինքնին
ի տեղուցն պատահեցի եւ տեսի:

Եղևի զարմ. յեղևի Բ:

Die 1. Propädeutik
die 2. Propädeutik
die 3. Propädeutik

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Յաւերժական յիշատակաց արժանի մեծագործութիւնքն Հայկազն վեհափառ Տերանց մերոց և պայազատ Իշխանացն՝ որոց այժմ՝ գրէ թէ մեծ մասն մեր առաջին ակնյայտնի կպարզուին և կբացուին իբրև անշուք և արտասուելի տեսարաններ, երբ կնկատէ մի Հայ՝ որ ունի ոգի ճշմարիտ Հայութեան և անզուգական սէր Հայրենեաց, չկարծեմ՝ անթաց աչօք և անկարեկիր սրտիւ լինի իւր աղէտալի Հայեացքն դէպի այն նուիրական առարկաներն, վասն զի երբ կմտաբերէ Հայն՝ որ երբեմն այն երկնահասնգէտ Աստուածեան հրաշալի Տաճարներն կպայծառանային գեղեցիկ կարգօք և կանոնիք, կլուսաւորէին սրբութեամբ, որով և օր քան զօր կբարձրանայր եղջիւր ուղղափառ դաւանութեան Քրիստոնէական սուրբ հաւատոյ, այժմ՝ շատերն զըկուած այն ամենայն սրբութեան բարեզարդութեանէ և զառնալով բնակարան բուոց և ազոաւուց, և որջ աղուխուց և նապաստակաց, կտիրէ նոցա վերայ մի միայն դամբանական խորին լուծիւնը: Երբ կմտաբերէ Հայն արքունաշէն ապարաններն, բազմութիւ անառիկ և անմատչելի բերդորայքն, որոնք իւրեանց հրաշաճարտար շինուածներովն երբեմն տեսողներն ի հիացումն և ի զարմացումն կկրթէին և ի խրախուծիւն կշարժէին, այժմ՝ մերկացած այն ամենայն շքեղ զարդարանքից, մի միայն անարգանքն է իւրեանց ժառանգութեան բաժինը: Երբ կմտաբերէ Հայն՝ որ հայկազեան սիրելի ազգն ևս երբեմն ըստ այլոց թագազարդ ականաւոր ազգաց իւր բնիկ հայրենի ժառանգութեան մէջ տաւաղելով՝ կպերճանայր իշխանական շքով, օրինօք և կարգօք, կզօրանայր զինուորական արիւթեամբ, կբարդաւաճէր Աստուածպաշտութեամբ և իշխանական պետութեամբ, և շատ անգամ զիւցազն պայազատներն ազգային սիրով վառուած՝ մինչև իւրեանց կենաց վերջն անհանդուրժելի վշտաց և նեղութեանց ընդդէմն ազգասիրաբար քաջութեամբ զրահաւորելով, և թափելով իւրեանց նուիրական ազնիւ արիւններն, երբէք չէին վհատիլ չէին դադարիլ կրկնել այս հրաշալի փրկաւէտ ձայներն՝ Հայրենիք, Ազգութիւն, Ազատութիւն: Բայց այժմ՝ դոցա ամենից հակառակն կփոխարինի մեզ. ի՞նչ արգօք. փոխանակ այն առաջին երջանիկ շքեղ բարեզարդութեանցն՝ վերջին արտասուելի ընդ-

գիմակազմութիւնք, տարագրութիւնք ցանկալի հայրենիքից, ըստրկութիւնք դառն ծառայութեանց, մերկութիւնք իշխանական պերճութիւնից, պետութիւնից և ամենայն պանծալի քաջութիւնից, փոխանակ ոսկեայ և արծաթի բազմոցաց և աթոռոց՝ աթոռ նանրութեան, և աթոռ վերջին նախատանաց, փոխանակ թագաւորական Պայխոնի և ծաղկեալ Պաւազանի՝ և ո՛չ անգամ ջախջախ եղէզն, ապա ուրեմն ո՞ր անգութ և անսիրտ Հայն է արդեօք, որ հրը ներկայօրէն կտեսնէ այս ազգային անզիւտ և անդարձ կորուսաներն, չ'մորմօրիլ սրտաճմլիկ, և սրտի խորքերէն դառն հառաչանաց արձագանքներ չ'անդրադարձնել. և ի՞նչ էր արդեօք այս ամենայն ազղտից և թշուառութեանց բուն պատճառն. ո՞չ ապաքէն խաւարասէր տղիտութիւնն և փոխառու հակառակասէր բարքն, որ զրէ թէ առհասարակ տարրացած էր մեր ազգին մէջ:

Ձէ պարծանք այժմուս՝ այլ յետին նախատիներ է այն Հայուն, որ չ'հասկանալով իւր ազգութեան սեփհական պարտիքներն՝ մինչև անգամ իրրև մի օտարազգի Հայ և Հայաստան անուներն աշխարհապարտութեան մէջ որոնելով գտնել կցանկայ. այլ գոհութեան և գովութեան արժանաւոր իսկ է այն Հայն՝ որ տեսնելով հայրենեաց մէկ աղէտն, կ'իութայ կարելոյն չափ սփոփել զայն՝ տեսնելով հայրենեաց փառաւորութիւնը, կ'իութայ խառնել նորա հետ նաև իւր սրտի խինդն:

Հայ եղբարք, դարն ուշ կ'ծնանի մեզ համար այլ ևս քաջազնին հաստարազուկ նահապետն Հայկ, որ ճշմարիտ Աստուածապաշտութեան և իւր որդւոց սիրոյ և ազատութեան համար վեհանձնական արիութեամբ պատերազմելով թաւալզլոր կործանեց գոռոզացեալ աստուածամարտ Տիտանեան Բէլ:

Ուշ կ'ծնանի դարն մեզ համար այլևս հայրենասէր Արամ, որ իւր բնական քաջութեամբն և խոհեմութեամբն Հայաստանի ոխերիմ թշնամեաց մին բարձր աշտարակի ծայր հանելով՝ նորա գործած անիրաւութեանց փոխարէնը երկաթի ցցով ճակատէն գամել, մին սպանանել և մին հալածական առնելով Միջերկրական կղզիներու մէկի մէջն փախցնել, Վապագովկիոյ երկրի վայրենի բնակչաց մէջն Հայ լեզուն տարածել, միով բանիւ լաւ համարել հայրենեաց վերայ սիրով մեռանել՝ քան թէ տեսանել յայտնապէս օտարածնաց անհարազատ որդիքը կոխել հարազատ հայրենի սահմանը:

Ուշ կձնանի դարն մեզ համար այլ ևս Երուանդեան քաջարի մեծն Տիգրան, որ էր իսկապէս պարծանք և միանգամայն պայծառացուցիչ Հայկազեանս թագաւորութեան, որոյ հայկական անպարտելի բազկաց ահացուցիչ կորովութիւնը Հայաստանի դաւաճան թըշնամին երազի մէջ սարսափացնելով խռովացնել և յայտնապէս իրօք սատակացնել:


Ուշ կձնանի դարն մեզ համար այլ ևս Մամիկոնեան քաջարին Վարդան, որ էր բարերար և մեծ խնամակալ Հայաստան աշխարհի, որ իւր քաջակորով ապատագունք զօրաց հետ արիւնաններկ սուսերն՝ նետ ու աղեղներն ձեռքերին առած իբրև արծիւ դէպի Աւարայր դէպի Արտազ պանալով՝ առիւծարար արձակուելով Պարսից սեւացեալ գնդին վերայ՝ կրօնից և հայրենեաց ազատութեան փրկութեան վարդակարմիր գրօշն կանգնեցոյց Հայաստանի մէջ:

Ուշ կձնանի դարն մեզ համար այլ ևս այն գիւցաղն պոյազատ սեպուհներն՝ որոնք իւրեանց քաջագօտի արիւթեամբն և պանծայի զործոց յիշատակներով անշնջելի գրոշմած են Հայոց ազգի սրտի վերայ. նոքա Հայոց ազգի և հայրենեաց համար իրաւի առաւօտեան արուսեակ էին, լուսապայծառ աստեղունք էին, անցին գնացին յախտնական անդարձութեան մէջ հանգչեցան. մխիթարուինք այժմ՝ մի միայն նոցա վսեմապանծ զործքերովն, նոցա յիշատակաց աւերակաց զերբուկներովն, որոնք իբրև ծաղիկ գարնայնոյ գեռ կրուրեն իւրեանց ցանկալի անուշահոտութիւնքն, թէպէտ և հնութեամբ թառամացած՝ սակայն իբրև նորաթիթիթ փորլնծայելով՝ քաջալերութեան կաւետն մեզ հանապազ անվհատելի յոյսեր, բայց այժմն կա՞ն արդեօք նոցա նման Հայաստանի համար մեծազօր խնամակալներ, հայրենասէր և ազգասէր բարերարներ, ո՞ւր են զոքա. թող ելնեն ի հանդէս, և նախնեաց զեղեցիկ վաստակներն և մեծազօրութիւններն իւրեանց անձանց վերայ կենսացուցանելով՝ նոցա մահուան հողից անդրէն առ կենդանութիւն յարութեան թող փոխադրեսցին: Թէպէտ և ազգութեանս արդի վիճակին նայելով՝ ոչ ոք է որ ուրանայ զայս իրական ճշմարտութիւնը, որ իրաւի կորուսած ենք մեր քաղաքական անկախ իրաւունքներն, բայց և այնպէս կխոստովանիմք պարծանօք՝ որ ունինք մինչև ցայսօր այնպիսի մի Հոգևոր ծայրագոյն Իշխանութիւն՝ որն մեզ համար սուրբ է, նուիրական է և միանգամայն Աստուածային առանձնաշնորհութիւն. եթէ այժմ Հայ անունը աշխար-

Տիս մէջ պարծանօք կ'իշխեմք, նորանով է. իսկ եթէ Հին ազգ լի-
 նեցներուս համար կ'պարծիւք՝ մեր պարծանաց աներկևան յայտնի
 վկայքն մեր նախնի վեհափառ Տիրանց և զիւցազն պայազատաց
 շնաշխարհիկ պանծալի գործքերն են, բաղմամբիւ հոյակապ մենաս-
 տաններն են, հրաշափառ Աստուածային տաճարներն են, անթիւ և
 անհամար փառահեղ շէնքերն են, որոց համար թէև Հայոց ազգը՝
 ո՛հ ցաւօք սրտի կ'իշխեմ՝, մեծաւ մասամբ անհոգ և անտարբեր մնա-
 ցած է, թէպէտ օտարների սաստկաշունչ փոշիներն օր քան զօր
 բարդուելով զիզուելով կ'ջանան իսպառ ծածկել մեր աչաց տեսու-
 թիւնից, սակայն կուգայ մի ցանկալի օր, որ ազգը իւր սուրբ հնու-
 թեանց արժէքը ճանաչելով՝ մի մեծազօր հրաշագործ ձեռք, զարա-
 ւոր ժամանակաւ փոշով ծածկուած այն աննշան կարծուած քարե-
 րըն անգամ՝ ազամանդի վերածել, և նոցա տղմերն սրբելով յօսկե-
 փայլութիւն վերստին հասցնել: Թէպէտ և մեր ազգութեան պար-
 ծանաց բեղմնաւոր ծառն այժմ՝ անստուղ տերևութափ կտեսնենք,
 սակայն արմատն դալար և խորագնաց լինելով՝ բուռն զիս հաստա-
 տուն է. կուգայ մի գեղեցիկ ժամանակ, կուգայ մի նուիրական օր, որ
 զթած Անիղլին մարդասէր աչաց քաղցր հայեցողութեամբն առ ազգս
 մեր և նորա սնքուն նախախնամութեան արեգական ջերմ՝ ճառա-
 գայթնկութեամբն ամենագեղեցիկ ծաղիկներով վերստին փթթելու է այն
 պարծանաց իշխանական ծառը, ուռճանալու է բաղմաբեղուն քաղցր
 պտուղներով: Հայն այնուհետև Նորայեցւոց ազգին նման տարաշ-
 խարհիկ պանդխտութեամբ Բարեկրնական զետերի մօտն չէ նստելու և
 ոչ լարով յիշելու անտի զՀայաստան, այլ բուն հայրենիքին մէջ
 նստելով զգուելու է զՀայ եղբայրն, սիրելու է ցանկալի մայր Հայաս-
 տանը: Հայն օտար հողով աճեցած ուռնեաց մէջ երբէք չէ կախելու
 իւր սրբութեան Ատակարանը և ոչ իւր տիրոջ գոհաբանական օրհ-
 նութիւնն օտար երկրի մէջ նուազելու, այլ այնուհետև Հայր սիրե-
 լով իւր ազգութիւնը, հայրենիքը, իւր անձն և . . . թշնամիներն ար-
 տաստանք առնելով՝ ապա ինքն ևս հպատակելով ազգութեան սիրոյ
 միութեան զրօշնն՝ կկախէ իւր սրբութեան կտակարանը հայրենեաց
 հողով աճեցած ծառէն, կնուագէ տիրոջ օրհնութիւնն իւր բնիկ
 հայրենիքին մէջ, և սկիզբն իւր կատարեալ ուրախութեամբ անու-
 ռանալի սիրով կ'իշէ ի մօտոյ նախապէս ցանկալի Հայաստանը, և
 քաղցրահնչիւն քնարի թիկերովն և սրտաուռ նուագներովն կ'զեղ-

գեղէ նորա փարեղի անունը, և թանկագին մարգարիտներով Հայաստանի համար յաւերժական փառաց պսակներ կ'յօրինէ. ո՛հ իցէր արդեօք և ամենեցունցս հանդիպել այն ցանկալի երջանիկ աւուրնս

Ասացէք կաղաչեմ, արդեօք մարդիկ առհասարակ աշխարհիս մէջ ի՞նչ բանով այնքան պատկառելի զգալի կարող են լինել և միանգամայն բարերար հանդիսանալ թէ յատկապէս իւրեանց ազգայնոց և թէ ընդհանրապէս մարդկութեանը և զնոսա բարւոք քաղաքակրթութեան հասցնել. ոչ այլ ինչով, եթէ ոչ իւրեանց չքնաղ պանծալի մեծագործութիւններովն, նորանոր հանձարաւոր գիւտերով, զանազան արհեստներով, զորս կընորհէ մարդոյս բանական անմահ հոգին և Աստուածաձիր հանձարը, որոյ զօրութեան և ներգործութեան ճարտարութեամբն քննելով բնութեան մէջ եղած զանազան գաղտնիքներն՝ այնուհետև մեծամեծ օգուտներ կընձևեն ազգութեանը և մարդկութեանը, և ահա այսօրինակ անմահ բարերարութիւններն՝ զորս տեսնելով մարդիկ՝ սիրայօրգոր ըստ ինքեանց կ'լինին և նոցա արժանայիշատակ գործքերը ազգութեան և մարդկութեան մտաց մէջ դարաւոր ժամանակաւ անմոռանալի յաւերժականութեամբ անմահացնելու դիտմամբ ի զիր արձանացուցանելով ի լոյս ընծայել, նախ իբրև երախտադիտութիւն նոցա բազմադիմի բարերարութեանցն, և երկրորդ նմանիլ նոցա գովելի գործոցն և նպատակացն, որոց և գեղեցիկ շաւղացն հետևելով և իմ՝ ձեռնամուխ եղէ այս փոքրիկ երկասիրութեանս (որոյ մէջն կնկատուին արժանայիշատակ չքնաղ մեծագործութիւնք, կրօնից և աստուածապաշտութեան սխրալի հանդէս նախնի վեհափառ Տիրանց մերոց, որոց երանելի կեանքերն, անմահ անուններն թուահամարաւ կտեսնուի ի վերջընթեր գրքուկիս պատմական ծանօթութեան մէջ), ոչ թէ այնու դիտմամբ՝ այն չքնաղ անձանց դասակարգն համաթուիլ կամ մասնակցիլ նոցա յատկացեալ փառացն և արժանաւոր դրուատանացն. ոչ երբ'ք այլ եթէ Հայաստան աշխարհի փոշիացեալ հնութեանց տաճարին վերանորոգութեան ներկայ կամ ապագայ յոյս մի կայ, ևս այժմն իսկ այն վերանորոգութեան նուիրական Տաճարին փոքրիկ բեկոր մի նուիրած լինիմ, յուսալով որ՝ մեր Հայ եղբարք սիրով կընդունին այս իմ անակնկալ ծառայութիւնը:



1 գեղ. 2 պսկ. 3 սանդղ. 4 բև. ո. 5 խուշ. 6 մու. բջ. 7 եղ. 8 կն. 8 սպ. 9 ն. 9 ջա. 10
 11 սպ. 11 սի. 12 բի. 13 սու. 14 բ. 15 շ. 16 եղ. 17 սու. 18 հա. 19 սր.

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՅՐԻ ՎԱՆԻՑ

ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ

Մեծահռչակ Մենաստանն Այրի 1) Վանից Արբոյն
Գեղարդայ 2) որ մեր նախնի վեհափառ Տերանց և
պայազատ իշխանաց հրաշալի մեծագործութեանց մէկն է,
իւրեան զեղեցկաշուք և զեղեցկատիպ վիմարդեան կրա-
մած շինուածովն՝ իրաւի ջերմեռանդ և մեծահաւատ
հայրենասիրաց ակնախտիղ կհանդիսանայ, կառուցուած է
Գառնոյ 3) երբեմն զիւղաքաղաքի արևելեան հիւսիսային
ձորամիջին մի և կէս ժամ հեռաւորութեամբ Գառնիէն.
ինչպէս տաժանակիր աշխատութիւնից կհասկացուին՝ ըս-
կիզքն Մենաստանի տեղն եղել է խիստ դարուփոս և անյար-
մար, բայց երբեմն ապառաժների խրթին թանձրութիւն-
ներն հարթելով, երբեմն դարուփոսներն լցնելով ու կրաշա-
ղաղ բարձրացնելով հաւասարած են գետինը, որ այժմ
հարթայատակ և վայելուչ կերևի. շրջապատուած է սե-
պացեալ բարձրաբերձ լեռներով, քարաժայռերի զլիններն
կարծես թէ բնութիւնն իւր ամենիմաստ գիտութեամբն
գիտմամբ զարդարել է հիասքանչ ճարտարարուեստ բուր-
գերով, կարակնակերտ աշտարակներով ու սրածայր կո-
թողներով, որոց առաջին՝ մարդկային հնարակերտած
Ազիպտական բուրգերն, կոթողներն և այլ շէնքերն, որոնք
անհամար ժրաջան արհեստաւորաց ձեռքերով դարաւոր

Ժամանակեայ անդադար աշխատութեամբ հազիւ գլուխ
 եկած են, և հաստատութեան ու տեղականութեան մա-
 սին յաւիտենականութեան կարգն անցած զերկնք կրկար-
 ծէին, այն իւրեանց խրոխտապանծ բարձրայօն գոռոզու-
 թիւններն նուաստացուցած խոնարհացնելու են: Կենաս-
 տանի հարաւային կողման պարսպի տակից կանցնի եղե-
 մարուզիս Ազատ Ա) գեան, որ մերձակայ և հեռաւոր լե-
 բանց ձիւնապատ գագաթների գողաւոր տեղերի և դա-
 բանակալ խորշերի հոսանուտ երակներից բղխելով՝ այն
 բարձրաբերձ գագաթների նեղ նեղ ջրանցքների միջից
 խոխոջանաց ձայներ հանելով՝ կիջնի դառ ի վայր լեբանց
 ստորոտը, որոց և խառնուելով բազմակնկան ականակիտ
 վտակաց և աղբերց քաղցրահամ ջուրերն, կձեանայ սոյն
 կարկաջահոս գեան, և գեղածիծաղ յաւէտ յառաջ խա-
 ղարով կինդանական սնունդ կպարգևէ արդաւանդաբեր
 անդաստաններին. այս գետից նաև դուրս կուգայ առատօ-
 րէն « Աարմրախայտ », ազնիւ ձուկն. իսկ տեղւոյս օդն է
 յոյժ առողջասուն, կինդանապարգև և զովարար. նմա-
 նապէս դարնան ժամանակը շատ զուարճալի է տեղւոյ բա-
 րեվայիլուչ դրութիւնը, ըստ որում դէմ յանդիման խո-
 բաձորին ապառաժների և քարաժայռերի երեսներն կտես-
 նէք լցուած սաղարթազուարճ պտղատու և անպտուղ
 ծառերով միմեանց գրկախառնած, թէև ծառերն անա-
 բուկետ են, սակայն խիստ սխրալի են և աչաց հայելոյ յոյժ
 հաճոյական. նա մանաւանդ, երբ զիշերային պահը կսկսի
 բաժանուել և կձագէ լուսափայլ առաւօտը ու քաղցրա-
 սիւզ հովը կշնչէ իւր անուշահոտութիւնը, թռչնոց ե-
 բամբն յափշտակուած բնութեան այս անմահական պար-
 գևաբաշխութիւնից, ծառերի ոստոց վերայ բազմած կըս-
 կսին միմեանց հետ ներդաշնակութեամբ մանեղ ի պարեր-

գուժիւն և ի հրաշալի նուազ սիրալիր, կարծես թէ քաղ-
ցըր մեղեդեաց և երաժշտական պէսպէս ձայներով նոր
օրհնութիւն կեղանակին Ամենակալ Արարչապետին, ո-
րով արդարև բաւական իսկ է տարազիր եղած մարդոյ
փարատել իւր ամենայն սուգն և տրտմութիւնն: Արդ՝
այժմ մեր խօսքերն կարելի իմն խորին պատկառանօք ուղ-
ղենք դէպի Տէրունեան Տաճարն, որ է տեղի սրբութեան
անաղօտ փառաց Աստուածութեան, դէպի Տէրունեան
Տաճարն ասեմ՝ որով այժմ մեր նախնի պայազատ իշխա-
նաց Աստուածահաճոյ առաքինութեանց սխրագործ հան-
դիսի պանծալի յիշատակներն դարուց ի դարս խնկելի
օրհնութեամբ կքարոզին յաւիտեան, և որոց ցանկա-
լի անուններն այժմէն իսկ կգանուին երկնային յիշատակա-
րանաց մէջ անեղծանելի դրոշմած:

ՎԱՆՔ ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ.

Ապաքէն, ինչպէս ի վեր անդր յիշատակեցինք, Գե-
ղարդայ մեծահոգակ մենաստանի շինութիւնն է յոյժ
չքնաղակերտ և հոյակապ, և ըստ ամենայնի կրօնաճ-
կաճոյ Գաղից, որոց շարադասութեանց մէջ ակներև
կտեսնուի արհեստի ճարտարութիւնը. կառուցած է սա՝
խաչաձև, առանց սիւների, միայն չորս միանման և միակ-
ցուրդ որմնասիւններով, ամեն մի որմնասիւնը եռակարգ
հատուածաձև իբր բաժանած, միջին կարգինը աւելի բա-
րակ և նուրբ, իսկ երկուքը յար և նման միմեանց. վերին և
ներքին խարխիսներն քառանկիւնաձև են, բայց անդ-
րուադ. սոցա վերայ ձգած է բոլորակ կամարներ և բարձրա-
ցուցած է փառաւոր սրածայր Աթոռղիկէն, որ ունի ու-

Թըն նեղ և երկայնաձիգ լուսամուտներ. իսկ Տաճարն
 ունի վեց լուսամուտներ, երկուքն արևելեան կողմն մի-
 մեանց կից՝ որտեղ է և աւագ խորանն, երկուքն արևմուտ-
 քը, որոնք կբացուին ընդարձակ Դամատան մէջ՝ մին հիւ-
 սիս, և մինն հարաւ, և բացի հարաւային լուսամտէն՝ որ է
 մեծադիր և քառանկիւն՝ մնացեալներն են նեղ և եր-
 կայնաձիգ. ունի երկու դռներ, մին կբացուի դէպի արև-
 մուտք, ընդարձակ Դամատան մէջ, և մին հարաւ դէպի
 դուրս: Տաճարի միջին տեսքը զրեթէ առանց քանդակա-
 գործութեան է. բացի աւագ խորանէն, կան յաջմէ և
 յահեկէ երկու կամարայարկ խորաններ ևս, որոց դռներն
 դէմ առ դէմ կբացուին աւագ խորանի բեմի վերայ և չորս
 աստիճան սանդղով կբարձրացուի բեմի վերայից նոցա
 մէջ. նոցա ներքնայարկերն երկու աւանդասներն են, ու-
 նին իւրաքանչիւրն մէն մի փոքրիկ լուսամուտ, արևելեան
 կողմն դէպի դուրս, և ներքնայարկ աւանդատների դռներն
 կբացուին դէպ արևմուտք՝ Տաճարի մէջն: Աւագ խորանի
 կիսաբոլոր որման վերայ կան երկուտասան ծաղկինկար
 քանդակագործութեամբ կամարաձիգ և սիւնազարդ շքե-
 ջանակներ, որոց մէջն՝ ինչպէս կերևի՝ երանելիքն ցանկա-
 ցել են առաքելոց պատկերներ քանդակագործել կամ նկա-
 բել, և սոցա վերայից դարձեալ գիղեցկաքանդակ կամար
 է բոլորած. յար և նման սոցա ձևակերպութեանցն է
 բեմի ճակատն, և սալայատակից մինչև բեմն հինգ աստի-
 ճան սանդղով կելանեն: Յետի դասու յաջմէ և յահեկէ
 կան դարձեալ երկու կրկնայարկ խորաններ. դէպի վերնա-
 յարկ խորաններն կբարձրացուին վեց աստիճան որմնա-
 մած սանդղով, զոր Տաճարի ամայութեան ժամանակը
 անօրէն Պարսիկք կիսով չափ կտարել են. սոցա դռներն
 միմեանց հանդէպ կբացուին՝ Տաճարի մէջն. ձախակող

մեան կրկնայարկ խորանաց փոքրիկ լուսամուտներն կրացուին հարաւ դուրսն. իսկ յաջակողմեան վերնայարկինը հիւսիս դէպի դուրս, և ներքնայարկինը դէպ արևելք Տաճարի մէջն. հիւսիսային որման մէջ՝ սրբանուէր աւազանի տեղն միայն է յատկացուցած, բայց ոչ վիմափորած, ուր հնար լինի կատարել Մկրտութեան սրբազան խորհուրդն: Տաճարի միջին բարձրութիւնը սկսեալ սրածայր կաթուղիկէի բուն միջակետիցն՝ ուր է հրաշաքանդակ պատկեր Զօր Աստուծոյ, մինչև ցյատակն եկեղեցւոյն է երեսուն և ինն կանգուն. երկարութիւնն՝ Աւագ խորանի բեմի առաջէն ցարևմտեան դուռն՝ որ կրացուի ընդարձակ Ճամատան մէջ, է տասն քայլ, իսկ լայնութիւնն՝ հիւսիսէն մինչև հարաւ՝ է տասն և մի քայլ. նմանապէս կրկնայարկ խորաններն հաւասարաչափ մեծութեամբ ունին երկու քայլ լայնութիւն, երեք քայլ երկայնութիւն և չորս կանգուն բարձրութիւն:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԲ ՏԱՃԱՐԻՆ Ի ՆԵՐՔՈՒՍ:

Աւագ խորանի հիւսիսային որման վերայ:

“ Ընորհիւն Աստուծոյ, ես Պռոշ 5) իշ
 “ խան որդի Ալասակայ 6) յազգէն խաղբա-
 “ կայ գանձագին արարի ի տերանց աշ-
 “ խարհիս սուրբ ուխտս Այրի վանից լե-
 “ բամբք և դաշտաւք և ամենայն կազմու-
 “ թեամբ որ կայր ի սմա
 “ ոսկի և արծաթ խաշ և պահարանս, սը-
 “ կիհք բուրվարք և քշոցաւք շինեցի եկե-

« ղեցիս և կանգնեցի սուրբ նշանքս և յար-
 « մարեցի գերեզմանատուն ինձ և ազգի
 « իմոյ յաւիտեան և տուի ի սպասաւորու-
 « թիւն սրբոցս այս հալալ գանձագին գե-
 « ղըն Օողջաբեր զՆերդաղն և ՃՌ սպ-
 « այլ եթէ յիմոց ազգէ կամ յաւտարաց *)
 « զիմ ոսկով գնած հայրենիքս ի այս սրբո-
 « ցրս հանել ջանայ զինչ և իցէ պատճա-
 « ռաւք զիմ անդարձս այլոց ետ դարձանէ
 « հանեալ լիցի այնպիսին յատենէն Մս-
 « տուծոյ և որոշեսցի յարդարութենէ սուրբ
 « հաւատոյս և առցէ զբաժին Յուդայի . .
 « . . ազ . . . ի վանից այս բանքս անջինջ
 « արձանագրելի որ խոստացան Օտակին
 « պատարագ և տարին անխափան կատա-
 « րեն զյիշատակ մեծ պարոն Պռոշի զար-
 « մից և զաւակաց նորա յաւիտեան ի թ.
 « 21, Բ » :

Վ չէրն արշանագրութեան ներքեան :

« Կամաւն Մստուծոյ ետ տղայ Գրիգոր 7)
 « որդի Վ խիթանկայ միաբա-

(*) Աստղանիշ բառից ցվիրջ պարբերութեան՝ որ է Հայկական տարեթիւն, իբրև առանձին հատուած փորագրած է յաջակողմեան վերնայարկ խորանի զրան ճակատին, ինչպէս տառերի ձևակերպու- թիւնը կհաստատէ նորա իսկական հատուած լինելն :

“նեցայ սուրբ ուխտիս Այրի վանից
 . . . և սպասաւորք սորա խոստացան Ա.
 “քառասունք Ղրիգորին . . . տէր
 “տուբկան կամ խափանէ” :

Ատֆ խորանի հարստային որման վերայ:

“Կամաւն Աստուծոյ ես Հասան 8) որ-
 “դի Ա խաթանկայ 9) թողն մեծին Սմբա-
 “տայ թագաւորազին միաբանեցայ սուրբ
 “ուխտիս և ետու պատուական աւետարան
 “յաւիտենական և Սպասաւորք սորա խոս-
 “տացան ի տարին ժամաւք Պատարագ
 “աւագ Օւտկին. Ն. ինձ. Ղ. իմ մաւրն
 “Նանային. Բ. Ռուգքանայ կենակցոյն ի-
 “մոյ որ խափանէ ՅժԲ, հայրապետաց նը-
 “զովեալ” :

Աջակողմեան աւանդարտան որման ճակարի վերայ:

“Աս Ասխաթան շինեցի զխորանս և
 “սպասաւորք սորա խոստացան ի տարոջն
 “Ղ. աւր ժամ, աւր Ա. ինձ, և աւր Ա. իմ
 “ճնողացն, աւր Ա. յեամկանն և մի' որ իշ-
 “խեսցէ խափանել” :

Այս վերնոյն խաչերի վերեւ:

“Քրիստոս ողորմեա կարապետին Ղը-
 “րիգորին և ճնողացն և եղբարցն ամէն” :

Խաչերի ներքին:

“ Կամաւն Լստուծոյ ես Գոհարս . . .
 “ դուստր պարոն Սարգսի Մեծ և ան-
 “ ճանց ետու. Կ. դաճեկան և Սպասաւորք
 “ սորա խոստացան ի տարին Գ. աւր
 “ ժամ , , : ”

Շեփախային սրճան վերայ Տօր Եւստուծոյ:

“ Կամաւն Լստուծոյ ես Գրիգոր յա-
 “ ռաջնորդութեան Չաքարիայի միայնա-
 “ ւորի ետու Յ. դաճեկան ի սուրբ Կա-
 “ թուղիկէս և սպասաւորք ցանկացան տա-
 “ րին Բ. ժամ որ ստացայ երիս խորանս
 “ սուրբ պս . . . Լստուած ողոր-
 “ մի Գրիգորին և ծնողացն ամէն , , : ”

Յեփի դաստ- յաջանողեան վերնայարի խորանի հարասային
 սրճան վերայ:

“ Ես Գրիգոր և Լուսիտս տուաք ի
 “ սուրբ Կաթուղիկէս ՃՈՒԻ. դաճեկան և
 “ շինեցաք զխորանս զայս և Սպասաւորք
 “ սորա խոստացան մեզ ի տարոջն Չ. աւր
 “ ժամ. Ե. Գրիգորին. Ե. Ա. Վաճրամին և Ե.
 “ Գիղովին , , : ”

Նոյն որման վերայ վերին արշամագրո-նեան փոքր ինչ ներբան:

«**Վամաւն ***) **Ըստուծոյ ես Մամբա մի-**
 «**արանեցայ սուրբ ուխտիս ետու Ի. դա-**
 «**հեկան և խոստացան Բ. աւր ժամ Ը. ինձ**
 «**Ը. իմ որդւոյ և հաւր Պողին**», :

Չախակողման աւանդաբան դրան ճակարկ վերան:

«**Վամաւն Ըստուծոյ ես Ըտում և ա-**
 «**մուտին իմ Ըրբայ միաբանեցաք սուրբ**
 «**ուխտի Ըյրի վանս և տուաք ընծայ զիմ**
 «**տունն որ յԱրեան է և Սպասաւորք սորա**
 «**խոստացան ի տարին Օ. աւր ժամ. Գ.**
 «**Ըտումայ Գ. Ըրբաին**», :

Փոքր ինչ ներբան մինչև դրան ճակարկ:

«**Վամաւն Ըստուծոյ ես Ռմեկս ետու**
 «**Վ. դահեկան ի սուրբ ա. . է տվի որ**
 «**նորոգեցին Ըյրի վանաց համար Խ. ի**
 «**Վանքս Սպասաւորքս խոստացան ի տա-**
 «**րոջն Լ. աւր ժամ Ը. Ռսկեհատին և Գ.**
 «**ինձ. կատարիչք Վարդաշինեցի զմի խո-**
 «**րանն և զհնձանն որ է մերձ իւրեանցս և**
 «**զՎողճնուտի այգին և տվի սուրբ ուխտս**

(*) Սորա վերևի մի արձանագիրն իսպառ եղծուած լինելով՝ կարդալն ինձանից անհնարուոր եղաւ:

« Լ քնակիչք սորա ետուն ի տարոջն Բ.
 « աւր ժամ. Օ. աւրն ինձ Ե. իմ հաւրն
 « Ստեփաննոսին Ե. Նասխաթունին ա-
 « մուսնոյն իմոյ որ խափանէ զժամքս դա-
 « տի ի Քրիստոսէ, » :

« Ես Մխիթար տվի Ի. դահեկան և
 « սպասաւորք սորա խոստացան ի տարին
 « Ե. աւրն ժամ ի սուրբ Սարգսի տաւնին
 « որ խափանէ դատի ի Քրիստոսէ, » :

« Ես Ա. ահրամս որ շինեցի զխորանս և
 « սպասաւորք սորա խոստացան ի տարոջն
 « Գ. աւր ժամ, Ե. աւր Ա. ահրամայ և աւր
 « մի իմ ծնողաց և մի աւր Ռուզուքանայ
 « մի ոք իշխեսցէ խափանել, » :

Հարասային որման վերայ դէպ է յախտիողմն քրան:

« Ես Մխիթարս ետու Զ. դահեկան
 « և սահմանեցին ի տարոջն Գ. աւր ժամ,
 « Բ. աւր ինձ Ե. աւր Թուրանին Ե. աւր
 « Գոհարինոս, » :

Նոյն քրան դէպ է յախտիողմն:

« Ես Ռուշունս միաբանեցայ Սուրբ ուխ-
 « տիս ետու Զ. դահեկան և թափեցի ըզ-
 « Գառնոյ խոպանն յիշատակ ինձ և ծնո-
 « ղաց իմոյ ով հանէ յեկեղեցոյս դատի

“ Աստուծոյ և սպասաւորք սորա խոստա-
 “ ցան ի տարին Գ. աւր ժամ, Ե. ինձ, Ե.
 “ Խաչատրոյ, Ե. Եմիտոնն Ե. Ա՛հճրամին, ”:

Յեպի Դասոս— Յախակողման վերնայարի խորանի հիստային
 որման վերայ:

“ Ես Սուքայս որդի Յովհաննիսի ետու
 “ Ի. դահեկան և Սպասաւորք սորա խոս-
 “ տացան ի տարոջն Ե. աւր ժամ որ խա-
 “ փանէ դատի ի Բրիստոսէ, ամէն ժամն
 “ Յովհաննիսի Եւազ Ե. շաբաթի աւրն |
 “ Կամաւն Աստուծոյ ես Ա՛արդ էրէց որդի
 “ աւազ Երիցոյն շինեցի զխորանս ար-
 “ դեամբք իմով և Սպասաւորքս սորա խոս-
 “ տացան ի տարին Գ. աւր ժամ Ն՛րա-
 “ գալուցին. Գ. աւր ինձ, Ե. իմ հաւրն որ
 “ ոք խափանէ . . . ”:

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍԲ ՎԱՆՈՒՑ ԳԵՂԱՐԳԱՅ.

Հոյակապ Տաճարս՝ զոր կառուցած են բովանդակ
 յղկեալ կարմիր քարից, իւր արտաքին դրուժեան մէջն
 երևելապէս է խաչաձև, յոյժ գեղեցիկ և չքնաղակերտ,
 մանաւանդ փառահեղ Աթուղիկէն, որոյ բոլորաձև լայ-
 նանիստ շրջապատն մինչև վերին կամարն, որ տեղից կըս-
 կըսի բոլորչի սրածայր զմբէթն, շքեղազարդած է շղթա-
 յաձև ծաղկենկար քանդակագործ գօտիներով ևս և վեշ-
 տասան անկիւնաւոր կամարաձիգ և սիւնազարդ շրջանակ-

ներով, որոց ութիցն միայն՝ մէջ առ մէջ կրացուին նեղ
 և երկայնաձիգ լուսամուտներ, բոյց այդ շքանակների
 կամարաց և լուսամտից գլխներին և թէ անկիւնների
 մէջն կտեսնուին զանազան արհեստական հիանալի քան-
 դակներ, զոր օրինակ՝ մարդոյ զլուխ, աստղանիշ և շուշա-
 նաձև ծաղիկներ, վարդեր, ողկոյզներ խաղողոյ, սաւառ-
 նաթև արծուի մագիլներովն բարձրացուցած մի գառն,
 թռչունք, նապաստակ, եզան զլուխ ևլն. նմանապէս Աս-
 թուղիկէի երկաթի խաչի պատուանդանի չորս կողմն գե-
 ղեցիկ պատկերներով քանդակագործած է, զոր օրինակ՝ ա-
 րևելեան հիւսիսային կողմերն մարդկան երկու պատկերներ
 են կիսով չափ, հարաւայինը քառաթև հրեշտակ, իսկ ա-
 րևմտեանը՝ երկգլխեան սաւառնաթև արծուի, և կողմնա-
 կան խաչաձև թևերի իւրաքանչիւրոց ծայրին կան փոք-
 րիկ զանգակատան նման քանդակած քարեր՝ գլխներին
 երկաթի խաչեր: Յոյն այս հրաշափառ Տաճարս՝ որոյ
 միջին տեսքը ստորագրած ժամանակս յիշած եմք, ունի
 երկու դռներ, մին դէպ արևմուտք ի ներքուստ՝ որ կրա-
 ցուի ընդարձակ Ժամատան մէջ, և մին հարաւ դէպի դու-
 րըս. հարաւային դրան արտաքին տեսքը գեղեցիկ քան-
 դակագործութեամբ դրուագած են միմեանց վերայ եկած
 սիւնազարդ կամարներով, մանաւանդ բուն ձակատը,
 որոյ վերայ հիանալի արուեստակերտութեամբ քանդակած
 են հինգ հատ սաղարթագեղ խաղողոյ որթեր, որոց և
 իբրու պատուաստած լինելով նոնենիք, երկոցունց հա-
 սունացած քաղցրաճաշակ աղնիւ պտուղներն տերեւ-
 զարդ ճիւղերից զոյգ զոյգ կախուած՝ զերնք խիստ հա-
 ճոյական կրնձայնն տեսողներին, և որովհետև այժմ՝ դը-
 րան գլխին փոխանակ զանգակատան շինած է երկաթի
 թիթեղից կիսաբոլոր ծածկոյթ, ուստի խաղողոյ որթերն

կմնան ծածկութի ներքոյ, զորս նորա տակէն միայն կարելի է տեսնել. բայց զբան վերին քառանկիւնաւոր քանդակագործ շրջանակի միջին կողմն՝ որ տեղ է արձանագիր յիշատակի, յաջ և յահեակ կան երկու կտցար թռչուններ՝ մէկի գլուխն կտտրած, և սորա բարձրն է հարաւային քառանկիւնաւոր մեծ լուսամուտն, որոյ յահեակ կողմն կան մի հատ մարմարոնեայ փոքրիկ խաչ անթուական արձանագրութեամբ և մի հատ արևու քանդակագործ ժամացոյց. իսկ լուսամտի գլխին կան երկու հատ ահարկու սոսկալի առիւծ և ցուլ կենդանիներն, առիւծը իւր զօրեղ ձեռքերն ցլու ուսոց և մէջքին վերայ դրած՝ խորտակել կսպառնայ, իսկ ցուլն իւր սրածայր եղջիւրներն անցուցած առիւծոյ փորոյ տակն շրջել կըջանայ. ինչպէս հարաւային որման մէջ յաջ և յահեակ դրանը, նրմանապէս արևելեան որման մէջ կան երկու երկու բարձրադիր ծոցացած սիւնաձև խորշիւր գրեթէ փոքր ինչ անհաւասար որմոց բարձրութեանցն. գլխներն գեղեցիկ ծաղկենկար օխաւեղազէս *) կամարներով. նմանապէս հաճարի բոլոր որմոց վերին ելերքն մանրածաղիկ նկարներով զարդարած են:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԷՔ ՏԱՀԱՐԻՆ ԱՐՏԱՔՈՒՍՏ.

Հարտայնն գրան երկաթի Ռեկեզից Չաճկոնի վերն
կամարի մէջ:

« Կամաւն Լստուծոյ ես մի թորոս մի-
« արանեցայ սուրբ ուխտիս տվի Ղ. դա-
« հեկան խոստացան Ե. աւր ժամ », :

(*) Սաչաղ:

Նոյն դրան Կառանկէնաւոր շրջանակէ մէջ՝ որպէս էն լըու-
նոց պատկերք :

« Կամաւն Ըստուծոյ ես Սուէ որդի
« Թաղայի յազգէն Չիթաղեանց 10) քաղ-
« քէն Թիֆլիսու նորոգեցի զՎաթուղիկէս
« յիշատակ ինձ և Թաղային և Բէկի Սուլ-
« դանին և ամուսնոյն իմոյ Գարեջանին և
« որդւոյն իմոյ Ստեփաննոսին եղբարցն ի-
« մոց Օւլիին և Օւրապին և ամուսնոյն
« իմոյ Գինազն և որդոյ Թաղայի և Տան-
« գուցելոցն ի Քրիստոս Պապքան և կա-
« խեցի արծաթէ կանթեղս սուրբ Գեղար-
« դին և ետու զխարճ նորա Տանապազ
« վառ պահեսցեն. [ԹՎ. ՌՃ՛Ի] » :

Սոյն արշանագրո-լեան վերին :

« Շնորհիւ ամենազօրին Ըստուծոյ եր-
« բորդ անգամ նորոգեցան տանիքս Եյրի
« վանիցս սուրբ Գեղարդայ Տանդերձ եր-
« կոքումբը զմբէթիւք տրօք Լուսաւորչա-
« կան Հայոց Ժողովրդականաց և բազմա-
« ջան աշխատութեամբ վանաճօր Միքայէլ
« վարդապետի Չամօյեանց Տիֆլիսեցւոյ, որ
« և գնեաց յօգուտ վանիցս իւրով*) սեփա-

(*) Իսպառ. ստուծիւն Տամարկու. է նորա սեփականութիւն լի-
նելն, այլ ինչպէս Սինօղի գործքերէն յայտնի կտեսնուի՝ վանուց ար-
գեամբն է գնած :

“կանութեամբ զՎողդ գիւղն ընդ միոյ ջը-
 “րաղացի, թուին Հայոց ՌՉԵ. յամի
 “Տեառն 1855”:

Հարասայնի Կրտսէ Երան Երան Երան Երան Երան Երան
 Երան Երան:

“Կամաւն Աստուծոյ ես տէր Յովսէփ
 “միաբանեցայ սուրբ ուխտիս ետու Ռ. սպ.
 “և սպասաւորք սորա խոստացան ի տա-
 “րին Ե. ժամ”:

Հարասայնի Կրտսէ Երան Երան Երան Երան Երան Երան
 Երան Երան:

“Որդ և ի շարս թուէաք ի սուրբ ե-
 “կեղեցւոյս ՃՌԻ դաճեկան և Սպասա-
 “ւորք սորա խոստացան ի տարոջն Գ. ա-
 “ւրք ժամ, Գ. ինձ, Գ. շաբաթի աւրն Աս-
 “տուծոյ”:

“Աս Մխիթար որդի Գրիգորի ետու
 “ի սուրբ կաթողիկէս զՎ. ժանն փոզ
 “ձթաճանք և Ծ. դաճեկան և Սպասա-
 “ւորք սորա տուին ի տարին Գ. աւր ժամ
 “Բ. աւր խալուփին և Ա. աւր ժամ Յով-
 “ճաննիսին և Ա. աւր Մխիթարա որ ըզ-
 “խորանս շինեաց”:

“Աս թորոս ետու Խ. դաճեկան և ըս-
 “պասաւորք սորա տվին Ա. աւր ժամ յա-
 “նուն իմ կատարեն”:

“Ես Տիրատուր ետու Խ. դահեկան ի
 “Տաւգոյս և սպասաւորք ի տարին Բ. աւր
 “Ժամ անեն ինձ ,” :

Հարտային դրան յախակողն:

“... ցի ետու Ա. դահեկան ի սուրբ կա-
 “թուղիկէս և սպասաւորք սորա խոստա-
 “ցան տարին ինձ Ե. աւր ժամ. . մամերին
 “այգոյն. Գ. աւր Ը. աւր Հազարդեղին և
 “Ը. աւր Ըղունեկան ,” :

“Թաղաղնոյն և աշխարհակալ Ըթա-
 “բէկ Իվանէի 11) և արեան հարազատի
 “իւրոյ տիեզերակալին զաւագ Սարգիս ա-
 “միր սպասաւարին և որդոյ նորին Ըւագին
 “և Շահնշահի որ առի Աայինով և Աայ-
 “ծունով մինչի ի յոկանա և մինչի ‘Նա-
 “խիճեան և անտի մինչև Աարս Ըստու-
 “ծոյ աւգնութեամբն և ապա եկի ի սուրբ
 “ուխտս ի յայս եկեղեցիքս և զսուրբս և
 “ինձ անուշ թուեցաւ յիմ անուն արարի
 “զիմ յիշատակ վերագրեցի և ետու Բեր-
 “դաղն սուրբ Աթուղիկէիս լուսացուի և
 “ով ոք հակառակիցի սևերես զայ և ե-
 “րից սուրբ ժողովոյն նզովեալ և յԸս-
 “տուծոյ ամէն ,” :

Ծոցա-որ խորշի ծոցն:

« Ամանն Աստուծոյ ես խորինշահ ամու-
 « սին Օգրարէի տն. թիղան միաբանե-
 « ցայ սուրբ ուխտս Այրի վանից և տո-
 « ւաք երկու սկիհք, մէկ բուրվառ, մէկ
 « կանթեղ արծաթի և այլ արդիւնք Սպա-
 « սաւորք սորա խոստացան ի տարոջն Դ.
 « աւր ժամ », :

Արեւելեան հոգման հարստային խորանի որման վերայ Ռիմանց
 կնց:

« Ես Աբրահամ թոռն Աբրահամու որ-
 « դի քեռ Մարկոս վարդապետի շինեցի
 « զխորանս հալալ արդեամբք իմովք և
 « թագորաքայլին ծովն մեծ լրին որ ի
 « Գառնի և Սպասաւորք սորա խոստացան
 « յամենայն ամի պատարագել զՔրիստոս
 « Գ. աւր յանուն իմ, Ա. ինձ, Ա. Մարկո-
 « սի, Ա. Բարսեղին », :

« Ես Պետրոս շինեցի զներքին խորանս
 « յարդար գոյից իմոց և սպասաւորք սորա
 « սահմանեցին ի տարոջն թ. աւր ժամ.
 « Բ. Խաչատրո, Բ. Յակոբա, Բ. Պետրոսի,
 « Ա. Վարդեշերին, Ա. Սարգսի Ա. Մուկին », :

« Ես Խաչատուրս զիմ այգին
 « ետու ի սուրբ եղբայրանոցս և սոքա փո-

«խարէն հատուցին ինձ ի տարին Ռ. աւր
«ժամ Ե. աւր ինձ և Ե. աւր իմ ծնողա-
«ցըն որ խափանէ դատի»,:

«Ես Ստեփաննոսս ետու ի սուրբ Աա-
«թուղիկէս Խ. դահեկան և Սպասաւորք
«սորա խոստացան ի տարին Ռ. աւր ժամ,
«և ինձ Ե. Պետրոսի եղբաւրն իմոյ»,:

«Ես Համազասպ ետու սուրբ եկեղեցիս
«Խ. դահեկան և Սպասաւորքն ետուն ի
«տարին Ռ. աւր ժամ ինձ»,:

«Ամակցութեամբ ամենայն եղբարց
«հաստատեցաք ի տարոջն Ռ. աւր ժամ
«Բախտոս դարբնին աւր Ե. ժամ Գրամ-
«կանն աւր Ե. Շատերոյն»,:

«Ես Ալարդաշահ ետու սուրբ եկեղե-
«ցոյս Ծ. դահեկան և պարգևեցին ինձ
«Ռ. ժամ Ե. աւր Սատատին, Գեղչուռե-
«նաց ստացա Ռ. աւր ժամ Ե. ինձ Ե.
«Շահկանն Ռ. աւր Ջուռնդին Ե. աւր
«Ջուրջին . . . »,:

«Ամաւն Եստուծոյ ես . . . նիկս
«Խ. դահեկան ետու խորանս և սպասա-
«ւորք սորա խոստացան ի տարին Ե. ժամ
«Գ. աւր ժամ Բիբային Ե. կանց նոր . . .
«Հ. դահեկան ետու սուրբքս Ե. աւր ժամ
«սո . . . իմ պապին Ե. աւր Սինանին Ռ.
«աւր . . . դաննոա:

Երևելեան հողման թոյացած սիւնայե խորշի վերին ծայրը:

“Ես Յակովբ աշակերտ Առւմիտասին
 “ետու Ա դահեկան և խոստացան Վ աւր
 “ժամ Ե, աւր Յակոբայ Ե Սիմէօնին Ե
 “Վաբբիէլին կատարիչք աւրճնին *) յԱս-
 “տուծոյ:

Երևելեան Ե-ագ խորանի որման վերայ միջանց կնց:

“Ես Հազարդեղս և Առւմիտասս տո-
 “ւաք ի սուրբ ուխտս Ա դահեկան և ըՍ-
 “պասաւորք սորա ետուն ի տարին Ե աւր
 “ժամ Ի աւրն մեզ Ե Եսլանին ի տաւ-
 “նի Քառասնիցն որ խափանէ դատի ի
 “Վրիստոսէ Ե աւր Վոճարին կատարիչք
 “աւրճնին որ ետ Ի դահեկան:

“Ես Սարու ետու Ի դահեկան և ըս-
 “պասաւորքս խոստացան Ի աւր ժամ
 “ես Ոսկի ետու Ի դահեկան և խոստա-
 “ցան Ե աւր ժամ:

(*) Ինչպէս հարաւային՝ նոյնպէս և արևելեան որմնց վերայ արտա-
 քուստ կան հատկաւ անխմաստ արձանագրութիւններ, զորս բերած
 են զանազան քանդուած շէնքերից և տաճարի շինութեանը պիտո-
 յացուցել, և երբեմն Տաճարն վերանորոգելով՝ ի տեղիս տեղիս հին
 արձանագրութեան քարերն՝ է որ տեղափոխած են և է որ կիսով
 չափ քարը կոտրելով ու արձանագրութիւնն տաշելով՝ գլխի վայր
 դրել են որման մէջ՝ ինչպէս որ յարմար է եղել շինութեանը, մէք
 զայնս երբէք չ'զրեցինք:

“Ես Հաւրքուրս ետու Ի. դահեկան և
 “խոստացան Ե. աւր ժամ:

“Կամաւն Ետուծոյ ես Մանուչարս մի-
 “աբանեցայ սուրբ ուխտիս ետու Ի. դա-
 “հեկան և խոստացան Ե. աւր ժամ Եւե-
 “տեաց Նրագալուցին:


Երեւելան հե-տապի նորանի որման վերայ:

“Կամաւն Ետուծոյ ես Նախավկա շի-
 “նեցի զխորանս արդեամբք իմովք և
 “Սպասաւորք սորա ետուն ի տարին Գ.
 “աւր ժամ, Ե. աւր ինձ, Ե. աւր Սիմոնին
 “Ե. կատարին:

ՄԻՋԻՆ ՏԵՍՔ ԺԱՄԱՅԱՆ ՎԱՆՈՒՑ ԳԵՂԱՐԳԱՅ-

Հրաշափառ Տաճարի առաջին արեւտեան որմանը
 կից է ընդարձակ հոյակապ և չքնաղակերտ ժամատունն,
 որոյ մէջ ինչպէս ի վեր անդր յիշատակած ենք, կրացուի
 Տաճարի արեւտեան դուռն, կառուցած է սև քառակու-
 սի երկոտասան խարսխաւոր սիւների վերայ, որոց չորսն
 են միջնասիւներ միապաղաղ բոլորչի միանման կափածոյ
 կապտագոյն կարծր քարից, որոց և վերնախարսիսիններն
 դրուազաւոր են, իսկ ութն են դարձեալ միանման որմ-
 նասիւներ *), երկու երկու դէպ հարաւ և հիւսիս՝ և եր-

(*) Կան այլ ևս երկու որմնասիւներ, զորս համարելու է արեւմ-
 տեան անկիւնասիւնք, որոնք իւրեանց բարակութեամբն բաւականին
 տարբեր են միւս որմնասիւներից:



ՆԵՐՔԻՆ ԵՐԵՒՈՅՔ ԺՂՄԱՏԱՆ ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՈՒՑ

կու երկու արևելք և արևմուտք Ճամատան տանիքի կամարաց չորս ծայրերն ձգած են ամեն մի միջնասիւնների վերնախարսխաց վերայ, և իբրև դարձուածք՝ յաջ և յահեակ իջած են երկոտասան որմնասեւանց գլուխների վերայ, որով և պարարածած են Ճամատան գեղեցկազարդ յարկը. նմանապէս բոլորաձև կիսագմբէթն, որոյ կեդրոնամիջին է մի բոլորչի լուսամուտ. ներքին ընդարձակութիւնը կսկսի երեք հատ միմեանց կից բարակ և կլորակ քառանկիւնաւոր կամարներից, և այն ընդարձակ տարածութիւնը հրաշազարդ քերուբաքանդակաւ հետ զհետէ քաղերով փոքրկացուցած է վերէն, որով բոլորաձև կաւարտի մինչև նոյն իսկ կեդրոնամիջի բոլորչի լուսամուտը. առաջին դասու միջնասիւնների առաջնակարգ կամարաց ձեղունը՝ որին կից է բուն առձարի արևմտեան որմն ուր է նա և դուռն *), սկսեալ հիւսիսային կրկնայարկ խորանաց գլխէն մինչև հարաւային կրկնայարկ խորանաց գլուխն ամբողջապէս հիանալի քանդակագործութեամբ դրուագած են, որոց վերայ կտեսնուին ճարտար ձեռաց արհեստական քանդակների զանազան յօրինուածներ, և պէս պէս սխրագործ մանրանկար դժագրութիւնք աստղանիշ բծերի, վարդից, շուշանաց, խաչից և յն. և դրան ձեղունի միջակետիցն կայ նա և կախուած չքնադակերտ մի ջահ քարեայ, նմանապէս հարաւային երկրորդ կարգի և հիւսիսային վերջին կարգի կամարաց ձեղուններն ըստ ամենայնի զարդարած են գեղեցիկ քանդակագործութիւններով, զոր օրինակ հարաւայինը՝ ամեն կողմից խորշ խորշ քաղերով՝ ապա կամարներից մինչև որման տարածութիւնը

(*) Սա համարելու է արևմտեան դուռն Տաճարին և արևելեան ժամատան:


Հնարակերտութեամբ ծածկած են Հինգ Հատ ամբողջ
 երկայնաձիգ քարերով, որոց վերայ յօրինած են դանա-
 զան հրաշագեղ ծաղկանց սքանչելարուեստ քանդակներ,
 իսկ հիւսիսայինը՝ իւր տարածութեան հաւասար ունի
 մի հատ չքնադակերտ քառաթև խաչ, որոյ միջակիտին
 կայ գեղեցկագոյն վարդաձև ծաղիկ. այն ամեն յիշատա-
 կած հրաշագեղ քանդակներն՝ ճարտարարուեստ նկար-
 չաց ձևքով գոյնգոյն երանգօք դեղագործած են, թէ-
 պէտ և դեղօրէից գոյներն, իւրեանց նախկին պայծառ
 փայլունութիւնը փոքր ինչ նսեմացուցած են, սակայն՝
 փառաց առաւելութիւնը բովանդակապէս չեն կորսնցու-
 ցած: Դամատունն ունի *) Հինգ լուսամուտներ, որոց ե-
 րեքն կրացուին դէպ ի հարաւ, մինն արևմուտք և մինն արե-
 ւելք, և բոց ի հարաւային միջին լուսամտէն՝ որ բաւակա-
 նին լայն է, մնացեալներն նեղ և երկայնաձիգ են. ունի
 երկու դռներ, մին կրացուի արևելք դէպ ի բուն Տաճարի
 մէջն, և մինն արևմուտք դէպ ի դուրս. արևելեան դրան
 կամարաձև ճակատի վերայ է արձանագիր շինութեան մե-
 ծափառ Տաճարին, և ճակատն զարդարած են մեծ և փոքր
 գեղեցիկ խաչերով ու մանրածաղիկ նկարներով, որոյ վե-
 րայ կայ նաև մի հատ մեծադիր շէշ սրբալոյս միւռննի և
 առաջին մի հատ ձագար. յաջմէ և յահիկէ դրանը, սա-
 լայատակի վերայ հաստատած են երկու վէմ քարեր,
 որոց ամեն մէկի վերայ կան քանդակագործ մեծադիր
 վէմ Խոսէր, յաջակողմեան վէմ խաչի վերայ Պ. Հայ:

(*) Բոց ի սոցանէ կան այլ ևս չորս լուսամուտներ, երկուքն դէպ
 արևելք, դրան գլխին, և երկուքն դէպ հիւսիս, վիմափոր եկեղեցւոյ
 դրան գլխին՝ որոնք ծամատան մէջն կրացուին և չեն համարուել
 իսկապէս ծամատանը, այլ Տաճարացն:

կական տարեթիւն միայն կայ և ոչ այնքան գեղեցիկ քան-
դակ իսկ ձախակողմեան վէմ Խաչը այն աստիճան հրա-
շաճարտարութեամբ մանրանկար նուրբ փորուածով քան-
դակագործած է՝ որ տեսողն իւր գեղեցկութեամբն իրա-
ւի կհիացնէ. սոյն այս հիանալի խաչի վերին ծայրի միջա-
կիտին քանդակած է հրաշագործ պատկեր Հօր Աստուծոյ,
որ յԱթոռ Աստուածութեանն բազկատարած բազմած՝
կարծես իւր երկնային խաղաղութիւնը կպարզէ աշխար-
հիս. յաջմէ և յահեկէ են Փրկիչ Յիսուսի մարդարէու-
թիւնն և հրաշագործութիւնն, մէկովն՝ Յիսուս վաստա-
կած լինելով ճանապարհէն իբրև ծարաւի անձն՝
Սամարացի կնոջէն ջուր կկնդրէ, և կինն սափորն ի ձե-
ռին բարձրացուցած կմատուցանէ Փրկչին, և Յիսուս՝
իբրև ի զարմացումն կնոջն և ի ցոյց Աստուածութեանն
կմարգարէանայ նորա հինգ այր փոխելն, իսկ միւսովն՝ իւր
Աստուածային հրաշագործ ձեռքն դրած Բեթսայիթա-
ցի **) կուրի գլխոյ վերայ, Աստուածական զօրութեամբն
կլուսաւորէ նորա աչքերն: Այս գեղեցիկ խաչի ներքին
ծայրի վերայ է Հայկական թիւն և քանդակագործ-
արհեստաւորի անունը այսպէս «ՈՒՄԻ ԹՎ. խաչիս.
Աստուած ողորմեա Տիմոթին և «Միսիթարայ յաւ-
րինողիս», և ես ի սրտէ կազաչեմ զերեսս մարդասէր
Բարձրելոյն Աստուծոյ, զի բազմիցս ողորմեսցի և զհա-
ւատացեալ հոգի սորա ի լոյս Աստուածութեան իւրոյ
հանդուսցէ, ըստ որում ահա զարաւոր ձախորդ ժամա-
նակներ հոլովելով սորա ճարտար մատանց հիանալի գոր-
ծը մինչև ցայժմ իբրև մի նուիրական բան կանդուն մնա-

(*) Յովհաննու աւետար. գլուխ Գ. և հմբ. Է:

(**) Մարկոսի աւետար. գլուխ Ը և հմբ. ԻԳ:



სტ. ნინოს ეკლესია

լով Աստուածային Տաճարիս մէջ, օտարազգի հնասեր ճանապարհորդաց առաջին փառք և պարծանք կրնճայէ փառազուրկ ցանկալի մայր Հայաստանին: Ասն դարձեալ արևելեան որմանը կից յաջ և յահեակ կրկնայարկ խորաններ, վերնայարկ խորանաց դռներ կբացուին միմեանց հանդէպ հիւսիս և հարաւ՝ ուր և կբարձրացուին չորս աստիճան որմնամած սանդղներով, իսկ ներքնայարկների դռներն կբացուին ժամատան մէջ դէպ արևմուտք. հարաւային կրկնայարկ խորանաց երկու փոքրիկ լուսամուտներն կբացուին դուրս դէպ արևելք, իսկ հիւսիսայինը չունին երբէք լուսամուտ. ժամատան միջին բարձրութիւնն սկսեալ կխազմբէթի բոլորչի լուսամտէն մինչև սալայատակի կեդրոնն *) է քսան և հինգ կանգուն, երկայնութիւնն արևելեան կողմէն ցարևմուտ տասն և ութն քայլ, և լայնութիւնն հիւսիսէն դէպ հարաւ քսան և երկու քայլ. իսկ կրկնայարկ խորաններն են հաւասարաչափ մեծութիւնով, որոց երկայնութիւնքն են երեք քայլ, լայնութիւնքն երկու քայլ, իսկ բարձրութիւնքն չորս կանգուն:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՄԵԾԱԿԱՌՈՅՑ ԺԱՄԱՏԱՆՆ Ի ՆԵՐԲՈՒՍՏ.

Երևելեան դրան վերին կամարի վերայ:

«Ես մի կին Օւուզայ ոն Հասանայ ետու ի սուրբ եկեղեցիս . . սա-

(*) Սալայատակի կեդրոնամիջին է վարդաձև քանդակագործ քար, որոյ մէջ տեղն կայ փոքրիկ ծակ, և սորա տակն է հոր, որ անձրևի և հալած ձիւների ջուրերն կխազմբէթի լուսամտից ներս թափած միջոցն կժողովին հորի մէջ և ներքին ջրանցքովն կոչնչանան:

« Բին ՂԼԻ. դաճեկան . . ման Ջ. ժամ
 « Ինձ Մստուածածնի աւրն որ խափանէ
 « դատիցի:

Ի ճակատ արեւելեան դրանն:

« Ի ժամանակս թագաւորազնոյն Ջա-
 « քարիայի և Իվանէին նորին հարազա-
 « տի և որդւոց նոցին Շահնշահի և Մա-
 « գին և առաջնորդութեամբ Բարսղի մի-
 « այնաւորի և աշխատութեամբ եղբարցս
 « շինեցաւ Վաթուղիկէս մեծափառ, թուին
 « ՈՎԻ:

Նոյն դրան վերայ գրանսած խաչքի շրջանակն:

« Ջմաճացեալս մեղաւք զՍարկաւազ
 « Վարդանս համաւրէն միաբանաւքս յի-
 « շեցէք Ի Քրիստոս:

Արեւելեան յախակողման սրճատանի վերնախարսի լրայի
 համարի ծայրին:

« Ես Լուլիկս Սուլիթենցի ետու Ի
 « սուրբ Վաթուղիկէս Ի. դաճեկան և Վալա-
 « սաւորք սահմանեցաք Բաւր ժամ որ խա-
 « փանէ դատի Մստուծոյ:

Սոյն որճնասեան միս հոգի որճան վերայ:

“Ամանն Աստուծոյ ես Միմէոն միա-
 “բանեցայ սուրբ ուխտիս և տվի Օ՝ դա-
 “հեկան և Սպասաւորք սորա խոստացան
 “տարին Գ՝ աւր ժամ ինձ:

“Ես Սալճուտս միաբանեցայ սուրբ
 “ուխտիս և տվի Ի՝ դահեկան և խոստա-
 “ցան Ե՝ աւր ժամ:

Չախակողման վերնայարկ խորանի դրան ճօր:

“Ի յանուն յիշատակ սուրբ Թաղէոս
 “Առաքել խորանիս ի յիշատակ Աիրակոսի
 “հաւր Գաւթի մաւր:

Աջակողման ներքնայարկ խորանի դրան ճակարի խաչեց
 շրջանակը:

“Քրիստոս ողորմեսցի Աարապետին և
 “ճնողացն ամէն:

Խաչերի վերևն:

“Շառայք ի գեղձէ Արևանայ մնեալ
 “ի կաթ
 “հալալ ընչեց իմոց շինեցի զերկու խորա-
 “նըս և
 “կաթուղիկէիս և ետու զիմ այգին որ
 “Արևան ի

«րոյ և Սպասաւորք սորա ի տարին . . . Տօր
 «Տողո ճարին Գ. իմ մաւր մա հ ա ո ռ . . . բ
 «Բ. Մխիթարին որ խափանէ սև երես
 «առաջի Բրիստոսի Օ. ժամ Յովհաննու
 «և սուրբ Յակոբա

Եւստիւնի Գրատիւն յազատեալեան Ռեզնասեան վերայ:

«Կամաւն Եստուծոյ ես Ստեփան սնեալ
 «ի սուրբ ուխտս հալալ ընչիւք իմովք սա-
 «լեցի զՎաթուղիկէս և Բ խորանս և խոս-
 «տացան տարին Գ. աւր ժամ Բ. ինձ Ե.
 «իմ մաւր խուժլումամին:

Եւստիւնի Գրատիւն յազատեալեան Ռեզնասեան *) վերայ:

«Կամաւն Եստուծոյ ես Յակոբ պապ
 «. . . որդի և ամուսին իմ խաթունս միաբա-
 «նեցաք սուրբ Գեղարդանս և ի մեր հա-
 «լալ ընչից տուաք Ղ դահեկան և Սպա-
 «սաւորքս խոստացան Գ ժամ տարին. Ե
 «ինձ Ե իմ հաւրն Ե իմ Հայխաթունին

(*) Սորա վերնախարսի տակէն սկսեալ մինչև սեան կէսն կայր
 արձանապրութիւն, որոյ չորս կարգն իսպառ եղծուած լինելով կար-
 դալն ինձանից անհնարաւոր եղաւ, իսկ մնացեալն՝ արձանապրի բո-
 վանդակ իմաստն չ'յայտնելու պատճառաւ չ'գրեցինք:

«Ժամ սուրբ Յակոբի տաւնին *) ՀԳ.

«ԹՎ:

Նմանապէս չորից միջնասեւաց վերնախարսխների անկիւնների մէջն թէ և կան փորագրած արձանագրութիւններ, բայց հասկտոր և անիմաստ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔ ԸՆԴԱՐՁԱԿ ԺԱՄԱՏԱՆԵՆ ԳԵՂԱՐԳԱՅ ՎԱՆԻՑ.

Մեծակառոյց ընդարձակ Ժամատունս այս, որոյ միջին տեքը ստորագրելովս յիշած եմք թէ՛ կից է Տաճարի արեւմտեան որմանը, իւր արտաքին մեծադիր երևութի մէջ գեղեցիկէ և հոյակապ, կառուցուած է քառակուսի բոլորովին կարմիր յղկեալ քարից, և հիւսիսային կողման ամբողջ որմն՝ նմանապէս և կէս մասն արեւմտեան որմանը մինչև դրան մօտ, բայց ոչ տանիքի հաւասարութիւնը, վիմափոր եկեղեցեաց քարածայուն է, որոյ վերայ ներքուստ գնացած են յարկի կամարներն առանձին որմնասիւններով. չկայ և ոչ մի կողմն Ժամատան կամ արձանագիրք յիշատակի և կամ նշանաւոր քանդակներ, բաց ի արեւմտեան դրան ճակատէն, զոր հրաշագեղ ծաղկանց հիւսուածներով և մանրանկար քանդակագործ կամարներով սիրատեսիլ փառազարդած են. և բաց ի հարաւային կողման մէջանդի մեծադիր լուսամտէն, որոյ վերեն քանդակած են բոլորչի գեղեցիկ ծաղիկներ և մի հատ խաչ, որոյ յաջ և յահեակն կան մի հատ ահարկու առ-

(*) Արձանագիրն խագառ նոր լինելով՝ Հայկական թուականի սխալ լինելու մասին իսկապէս կասկածելու է, կամ գուցէ ինչպէս սովորութիւն էր՝ ամբողջ թիւն թողուլ զօրութեամբ և կոտորակն միայն գրել:

իւծ՝ որ ձեռքերն և ոտներն ծալած խոռոժ հայեցուած-
քով կնայի, և մի հատ զիշախանձ արծուի, որ ողորմելի
Թռչունն իւր զիշատիչ մագիլների տակն առած կտցովն
անգթաբար զլուխն կփրցնէ: Ժամատունն իւր տանիքի
կեդրոնամիջին ունի մի հատ կիսագմբէթ և մի հատ փոքր
զանգակատուն, զոր կառուցած է հարաւային և արևե-
լեան անկիւնի ծայրին՝ որից և կախուած են երկու զոյգ
մեծ և փոքր զանգակներ, զորս կհնչեցնեն արևելեան դրսի
կողմէն. ինչպէս յիշատակագրութենէն կհասկացուի՝ մի
զոյգ մեծ զանգակներն Բէհրուտեանց իշխանազունքն
ընծայած են յանուն Գեղարդայ Վանից, զոր օրինակ
առաջին՝ «Յիշատակ է այս զանկազս հանգուցեալ կը-
նեազ մինիշկարբաշի Յովսէփայ Բէհրուտեանց և կո-
ղակցոյ նորա Մարիամին և Թուան նորին Յովսէփայ
ի կենաց ընդ երկայն աւուրս: 1835 Յուլ. 23, ի դու-
ռըն Գեղարդայ Վանից», երկրորդն՝ «Այս զանկազս
ընծայեալ եղև սրբոյ վանիցն Գեղարդայ յիշխանացն
Բէհրուտեանց 12) յիշատակնորայն գերդաստանաց իւր-
եանց կենդանեաց և ննջեցելոց. 1835 Յուլիս 23»,
«Վմանապէս մի զոյգ փոքր զանկազաց ուրիշ ուրիշ յիշա-
տակագրութիւնքն կյայտնեն բարեպաշտ նուիրատուաց
անուններն, զոր օրինակ առաջին՝ «Յիշատակ է Գեթ-
րոնեցի Առաքելի որդի Գրիգորի ի դուռն սուրբ Գե-
ղարդին. Թվ. ՌՆՂԻԸ ինչ երկրորդն՝ «Թվ. ՌՆՂԺ.
«յիշատակ է զանկազս խոջայ Նուրվէրտու որդի Աւե-
տիքին սուրբ Գեղարդայ», :

ՎԻՄՈՒՓՈՐ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՄԻՋԻՆ ՏԵՍՔԸ.

Որչափ և ո՞րքան ողջմտութեան զհետ երթալով հո-
գեկան ցանկութեամբ կսկսեմք նկարագրել մեր նախնի

վեհափառ Տէրանց և Քրիստոսազօր պայազատ սե-
 պուհների դիւցապնական գործքերն, որոնք երկնային ա-
 նանց փառաւորութիւնից երբէք չեն անմասն, և որոց
 գեղեցիկ անուներն և հոգեցատուր պանծալի յիշատակ-
 ներն իբրև ամենագեղեցիկ ակն պատուական յարձանա-
 գիրս Տաճարին կփայլն գերապանծ փառօք. ապաքէն
 դարձեալ ահա ըստ ինքեանց իբրև դիմահար մարմիններ
 մեր աչաց առաջին հետ զհետէ կարձանանան, մանաւանդ
 Մեծարգի բարեպաշտ իշխանին Պոռչայ որդւոյ Ասաս-
 կայ և նորա Աստուածատունկ շառաւիղաց վիմափոր զար-
 մանագործ եկեղեցիներն, որոնք իրաւի նոցա անեղծա-
 կան և անկողոպտելի փառաց մշանջնաւոր կոթողներն
 են, նոցա Աստուածահաճոյ առաքինութեանց հանդիսի
 անմահ վկայքներն են, որովհետև երանելիքն իւրեանց
 տօնելի բարեպաշտութեամբ և հոգեկան ջերմեռանդա-
 գին սիրով որ առ Աստուած՝ կարծես ձեռք ձեռքի տուած
 երկարժամանակեայ մեծածախս տշխատութեամբ Աս-
 տուածային փառաց երկնանման տաճարներն այն աստի-
 ճան հրաշաճարտար արհեստակերտութեամբ զարդարել
 են, որոնք՝ թէպէտ զարաւոր ժամանակների անյաջող
 բերմանց, ցաւալի արկածից հանդիպելով ամայութեան
 դառն մրուրը ճաշակեցին, սակայն իւրեանց նախկին փա-
 ռաց պայծառութիւնն իսպառ չկորսնցնելուց յետոյ,
 դարձեալ այժմ իբրև գերբնական Աստուածպաշտու-
 թեան գովելի գործ մի երևելով՝ հայրենասէր Հայերու և
 հնասէր ճանապարհորդաց առաջին բարձր ի զլուս փա-
 ռօք կպարծին, և որչափ որ մարդիկ ծարաւի անձամբ
 դիմելու լինին մանրակտիտ նկարագրել նոցա սխրալի գոր-
 ծոց ամեն մի պարագաներն՝ չզովացած անդէն յետս կը-
 դառնան հետ զհետէ հետաքրքրութեան գրգիռներ միայն

իւր մէջն զարթուցանելով . բայց որչափ սրախ բնական բաղձանքն կձկտեն և կզօրացնեն իմ անզօր մտացս կարողութիւնն, չեմ դանդաղել երբէք տալ ոչ ըստ մասնայ, այլ բովանդակապէս տեղեկութիւն հայրենասէր և հնասէր Հայ եղբարց, զոր ահա հետեւաբար կսկսեմք խօսել :

Հրաշափառ Տաճարի ընդարձակ Ճամատան հիւսիսային որման միջէն կբացուին վիմափոր երկուց եկեղեցեաց դռներն, մինն կրկնայարկ խորանի մօտէն, և մինն դարձեալ նոյն կողման վերջին որմնասեան մօտէն. առաջինը՝ որ մօտ է կրկնայարկ խորանին, զարմանակերտ վիմափորած է յանուն Ամենաարբուհոյ Աստուածածնի, որոյ առաջի դռնէն ներս կմտնուի ուղղակի վիմափոր Տաճարի Ճամատան մէջ, զոր վիմափորած են քառակուսի, բայց կիսամասն լայնութեան և բարձրութեանն բաժանած են, տախտաձև յատակը երկու թղաչափ բարձրացնելով . տախտի եզերքի միջակիտին կայ մի հաստ միապողաղ բոլորչի սիւն առանց խարսխաց, բայց սեան գլխէն յաջ և յահեակ լայնադիր կամարներ են գնացած, և կամարաց վերին կողմէն կսկսի կիսազմբէթի ներքին ընդարձակութիւնը, որոյ միջին տեսքը դրուագաւոր է, և հետ ըզհետէ բոլորաձև փոքրացնելով կաւարտի նորա միջակիտի բոլորչի լուսամուտն: Ճամատան հարաւային դրան հանդիպակշիռ դէպ ի յիշատակիալ սեան կամարի ճակատին կտեսնուին քարակուռ ահարկու և սոսկալի կենդանիներ, մէջ տեղն է մի հաստ սաւառնաթև արծուի, որ իւր մազիկներովն բռնած մի խոյ՝ կարծես թէ կըսլանայ դէպ ի վերսորա յաջմէ և յահեկէ կան երկու հաստ մատակ առիւծներ, որոց անխոնարհիլի պարանոցներն՝ անցուցած շղթայի երկուց ծայրից օղմանեակներն, դոցա վերէն կայ

մի հատ եղջիւրաւոր եզան գլուխ, որ շղթայի միջին օղմանեակն առնելով իւր բերանը ատամնացի պինդ բռնած իրեն կհնազանդեցնէ: Դամատունն ունի երկու զոներ, մինն դէպ արեւելք, որ կբացուի բուն վիմափոր Տաճարի մէջն՝ և սորա դրսի ճակատն ծաղկանց նկարներով դրուագած է, ուր նաև կան երկու զլեւաւոր առաքելոց պատկերներն, և կբացուի ընդարձակ Դամատան մէջ, որոյ զբլխին կան երկու նեղ և երկայնաձիգ լուսամուտներ. ունի մի հատ կիսաբոլոր խորան պատարագի. սորա արտաքին ճակատի վերայ յաջմէ և յահեկէ կան երկու հատ մարդադէմ թռչուններ՝ զլիններին դրած արքայական շքեղազարդ թագեր, որոց տակիցն դուրս թռչելով իւրեանց գիտոց խոպոպիքը, այտերի վերայ կծածանին. խորանի յաջ կողմն կայ մեծադիր որմնախաչ, զոր մանրանկար գեղեցիկ ծաղկանց հիւսուածքներով և ոլորուն փաթոյթքներով խիստ սխրատեսիլ քանդակած են: Դամատան երկայնութիւնն՝ արևելից դէպ արևմուտք, է և օթն քայլ, լայնութիւնն՝ հիւսիսէն դէպ հարաւ՝ տասն և մի քայլ, իսկ բարձրութիւնն՝ սկսեալ կիսագմբէթի միջակիտի բոլորշի լուսամտէն ցյատակն է քսան և մի կանգուն, ուր անդ կան նաև ննջեցելոց գերեզմաններ. բայց ափսոս որ տապանազիր չլինելով, չկարողացանք իմանալ թէ ո՞չ ոմանք էին նոքա: Դամատան արևելեան դրանէն *) ներս կմտնենք բուն իսկ վիմափոր փառաւոր Տաճարն, զոր արհեստակերտած են խիստ չքնաղ և վայելուչ, կարծես թէ յար և նման աւագ Աղեղեցւոյ ձևակերպութեանը առանց սեան, միայն միանման չորս հատ խարսխաւոր որմնասիւ-

(*) Սա կհամարուի իսկապէս արևմտեան դուռն Տաճարին և արևելեան Թամատան:

ներ ունի հատուածե եռակարգ բաժանած՝ բայց իբրև
 միակցուող ձևացուցած են, որոց վերնախարսխաց գլխից
 գնալով յաջ և յահեակ չորս կամարներն՝ պարարձած
 են զմբէթն. այդ կամարների ճակատներին միմեանց հան-
 դիպակշիռ կան չորս հատ բոլորչի քանդակագործ գեղե-
 ցիկ ծաղիկներ, զմբէթի ներքին ընդարձակ տարածու-
 թիւնը առանձին դրուագաւոր բոլորչի կամարից սկսելով
 մինչև նորա կիսամիջի դրութիւնը, կան երկոտասան կա-
 մարաձիգ և սիւնաղարդ շրջանակներ. իւրաքանչիւրոց
 վերին անկիւնների մէջն քանդակած են հրեշտակաց պատ-
 կերներ, եղան զլուխ, և այլ և այլ տեսակ ծաղիկներ.
 սոցա վերեւից գնացած է կրկին բոլորածե կամար և զմբէ-
 թի վերին դրութիւնն փոքրկացնելով՝ քանդակած են
 նոյնքան թուով դարձեալ կամարաձիգ շրջանակներ, և
 իւրաքանչիւրոց մէջ տեղն կան խաչածե հիւսած հրաշա-
 դեղ ծաղիկներ, և ամեն մի խաչի գլխին մի հատ նուռն,
 ապա կաւարտի մինչև զմբէթի միջակիտի բոլորչի լուսա-
 մուտն. բաց ի աւագ խորանէն՝ յաջմէ և յահեկէ նորա կան
 այլ ևս երկու խորաններ, որոց դռներն դէմ առ դէմ կբա-
 ցուին լայնարձակ սեղանի վերայ և դէպ ի սեղան ելքը
 հինգ աստիճան սանդղով հարաւային կողմէն միայն է.
 բեմի ճակատը չքնաղակերտ քանդակներով դրուագած
 են, նմանապէս նորա հարաւային սանդղոց գլուխն և հիւ-
 սիսային ծայրն՝ որ անբաժան է որմէն, կզարգարուին եր-
 կու հատ ամենագեղեցիկ քանդակագործ որմնախաչերով
 և մարդկան պատկերներով. բեմի ստորեն դէպ հիւսիս
 կայ դարձեալ մի խորան՝ որ ունի վէմքար պատարագի,
 զոր յարմար է կոչել աւանդատուն քան թէ խորան, որոց
 դուռն կբացուի դէպ հարաւ Տաճարի մէջն. դրան ճակա-
 տին կան քանդակած վարդեր և մեծաղիբ բոլորչի չքնա-

զակերտ ծաղիկներ. սրբանուէր աւագանը վիմափորած է հիւսիսային որման մէջ կից խորանիս, որոյ տակէն կրղխէ մաքուր բարեհամ ջուր. արեւմտեան դրան մօտ կան մեծադիր երկու հատ վէմ Խաչեր, որոց վերայ է հետեւեալ արձանագրութիւնս. « Սուրբ Խաչս կոչի Գարբիէլի, բարեխաւս տէր Մանուէլ 13) Ապիսկոպոսի », ունի երկու նեղ և բոլորշի լուսամուտներ, մինն դէպ հարաւ և մինն արեւմտեան դրան գլխին. բարձրութիւնն փառաւոր Տաճարիս գմբէթի կեղրոնամիջի լուսամտէն մինչև ցլատակն է քսան և չորս կանգուն. լայնութիւնն հիւսիսէն դէպ հարաւ ութն քայլ, և երկայնութիւնն՝ բեմի առաջէն մինչև արեւմտեան դուռն հօթն քայլ: Իսկ խորաններն են հաւասարաչափ մեծութեամբ, չորս կանգուն բարձրութեամբ, երկու քայլ երկայնութեամբ, մի և կէս քայլ լայնութեամբ. թէպէտ Տաճարիս միջին տեսքը նկարագրելով յիշեցինք որմնասիւնների և կամարների անուններ, սակայն դոքա ոչ թէ իբրև Տաճարի հաստատութեան մասին են շինած. որովհետև վիմափոր լինելով՝ երբէք կարօտութիւն չէր ունենալ այնպիսիներին, այլ իբրև զարդ կամ նմանութիւն կոփածոյ հատ կտոր քարից կառուցած եկեղեցեաց:

ԵՐԿՐՈՐԳ ՎԻՄԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ.

Յառաջագոյն ինչպէս յիշեցինք, վիմափոր Ակեղեցւոյ մի դուռն ևս կբացուի մեծակառոյց Դամատան հիւսիսային վերջին որմնասեան մօտէն. Տաճարիս միջին տեսքը խիստ հիանալի արհեստակերտութեամբ վիմափորած է առանց սեան, բայց չորս կողմն ունի ութն որմնասիւններ, և բաց ի հարաւային կողմէն՝ որոյ որմն իբրև կցորդ երևելով՝ խաչաձևութիւն կկորսնցնէ, զրիթէ Տաճարը խա-

չաձևոյ նմանութիւն ունի. ամեն երկու որմնասիւններն մի անկիւն կձևացնեն, և իւրեանց վերնախարսխաց զլսներից առանձին մէն մի կամար ուղղաձիգ բարձրանալով մինչև կիսագմբէթի տակն, ապա սրածայր կմիանան. կիսագմբէթի ներքին ընդարձակութեան շրջապատը շարակարգ գեղեցիկ նուներով զարդարած է և միջին տեսքը բովանդակ դրուագաւոր է. միջակեալին կայ մի հատ բոլորչի լուսամուտ. եկեղեցին ունի մի հատ կիսաբոլոր սեղան իւր խորհրդանոցովն, որոյ տակէն կրղևէ ջուր բարեհամ, և բեմը որման հաւասար է շինած առանց փոքր ի շատէ յառաջ բերելու՝ ինչպէս Հայաստանեայց եկեղեցւոյ սովորութիւնն է, և եկեղեցւոյ յատակէն այնքան բարձր շինած չէ, հազիւ թէ երկու կամ երեք թիղ կլինի. ունի հիւսիսային կողմն մի հատ աւանդատուն, որոյ դուռն կրացուի դէպ արեւմուտք, և որոյ յատակն վիմափոր խոր աւազան վիմարու ի քաղցրահամ ջրոյ, նոյնպէս մի հատ ևս կայ սորա առաջին, որոյ մէջ հիւսիսային որման անկիւնէն վիմարու ջուրն ժողովելով՝ վանուց հարկաւորութեան համար մանաւանդ ձմերային ժամանակներն այս ջուրն կրգործածեն. սորա վերեն արեւմտեան որման վերայ կան քանդակագործ խաչեր և հետեւալ արձանագիրս. «Աստուծոյ Աստուծոյ ես ջուրն ամբի ի մուլք», և սորա ստորեն կայ այսպէս. «Սուրբ խաչս բարեխաւս պարոն «Բուրթելին կողակցին Խամբէկուն որ մեր աւժար կամաւն այգին և բաղչէն ամբի վախմ ի դուռն սուրբ Գեղարդայ» :

Արեւմտեան և հիւսիսային որմնասիւնաց անկեան մէջն:

«Աւգնականութեամբն Աստուծոյ մեք միարանեցաք
«պարոն ջուրն պարոն Արդայ պեկիս պարոն Բուր-

«Թեև մեր հայրենական մուկքն և այգին բախչէն տո-
 «ւինք ի դուռն սուրբ Վեղարդին վախմ ով այլայլէ
 «ՅԺԸ հայրապետաց նդովեալ : Թով Ո . . . , : Հարա-
 «ւային որման կէսն բեմաձև է շինած, և զանազան սքանչե-
 «լի մանրածաղիկ քանդակներով և քանի մի փոքրիկ պա-
 «տուհաներով զարդարած. սորա վերեն կայ անթուական
 «արձանագիր յիշատակի մեծին և բարեպաշտ իշխանին
 «Պռոշայ. «Ի տէրութեան բարեպաշտ Թագաւորազին
 «Վրաց Եւազին և Շահնշահի և որդոյ նորա Ջաքա-
 «րիայի ես Պռոշ որդի Վասակայ յազգէն Խաղբակայ
 «զանձազին արարի ի տերանց աշխարհիս զմեծահոջակն
 «Եյրիվանս լերամբ և դաշտաւ և ամենայն կազմու-
 «թեամբ որ կայր ի սմա. փորեցի ի վիմէ տուն Եստուծոյ
 «յիշատակ ինձ և որդեաց իմոց և ամուսնոյն իմոյ Խուլթ-
 «լու խաթունին *) , : Տաճարի բարձրութիւնն սկսեալ
 «կիսագմբէթի միջակետի լուսամտէն ցյատակն է քսան և
 «երկու կանգուն, լայնութիւնն հիւսիսէն զէպ հարաւ է
 «տասն և մի քայլ, երկայնութիւնն արեւելքէն զէպ արե-
 «մուտք տասն և չորս քայլ : Ունի մի հատ դուռն հարա-
 «ւային կողմն՝ որոյ զլիւն կան երկու հատ նեղ և երկայ-
 «նածիղ լուսամուտներ՝ որոնք կբացուին ընդարձակ Ժամա-
 «տան մէջն :

(*) Սա անուան հետադոյ քանի մի բառեր կային՝ զոր յետոյ
 յաւելցուցած են, որ երբէք նմանութիւն չունին արձանագրութեան
 տառերին. ուստի արձանագրի հարազատութիւնն չկորսնցնելու իրա-
 «ւացի պատճառաւ՝ չգրեցինք :

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԻՄԱՓՈՐ ՄԱՏՐԱՆԱԶԵՒԻ ԽՈՐԱՆԱՑ
ԵՒ ԸՆԳՈՐԶԱԿ ԺԱՄԱՏԱՆԵՆ:

Մեծակառոյց հոյակոպ յամատան արեւմտեան դրանէն դուրս ելած ժամանակն՝ դէպի յաջակողմն դրանը կից կտեսնուի միմեանց մէջ երկու հաս մատրանաձև վիմափոր փոքրիկ խորաններ, զատ զատ՝ Պատարազի վէմքարերով, և խորհրդանոցներով, առանց սոցա աւելի նրման են ճգնաւորաց միանձուքների խուղերի քան թէ խորանաց. ունին մի դռնակ և մի փոքրիկ լուսամուտ՝ որոնք կրացունին դէպ հարաւ. չ'ունին երբէք վիմափորութեան ժամանակի յիշատակութեան արձանադիր. սոցա տանիքից սկսեալ յամատան արեւմտեան որման տակովն տասըն և երկու քայլ գնալով բարձր դէպ հիւսիս՝ կան դարձեալ միմեանց մէջ վիմափորած երկու հաս միաձև խորաններ, առանձին առանձին Պատարազի վէմքարերով և խորհրդանոցներով. ունին մի դռնակ, երկու փոքրիկ լուսամուտներ, որոնք կրացունին դէպ արեւմուտք, սոքա նմանապէս չ'ունին երբէք վիմափորութեան ժամանակի յիշատակութեան արձանադիր, և բարձրութիւններն, լայնութիւններն և երկայնութիւններն հաւասար չափով են: Սոցանից չորս քայլ հեռաւորութեամբ բարձր դէպ հիւսիս դարձեալ, մտնելով վիմափոր մի նեղ՝ բայց բարձր սրահ, որոյ երկօտասան քայլ երկայնութիւնն չափելուց զկնի, կհանդիպի առաջիկ վիմափոր ընդարձակ յամատան արեւմտեան մէկ հատիկ դուռն, ուր ներս մանելով կրացունն աչացդ առաջև Աստուածահաճոյ առաքինութեանց հոգեզուարճ տեսարաններ. այն աեղ կը տեսնես ոչ ընդ ազօտ, այլ դէմ յանդիման դերբնական Աստուածապաշտութեան սխրագործութիւններն, կտեսնես Վրիստոնէական ճշմարիտ հաւատը հանդերձ կատա-

րեալ գործովք, որ գերագոյն փառօք բարձր ի զլուս կը
 պարծի. այն տեղ կտեսնես համբերութեան հանդիսի
 կատարեալ տիպն, և օրինակն, որով երանելիքը զարեւոր
 բազմաքիրտն և բազմաճախ աշխատութեամբ հազիւ ի
 զլուս բերել կարողացել են այնպիսի զարմանագործ մի
 բան, այնտեղ կտեսնես՝ երկրաւոր գոյք և հարստութիւնք
 իրականապէս արհամարհելով վատնելն, ազարակք և ըս-
 տացուածք թողուլ ուրանալն. այն տեղ ի վերջոյ, կտես-
 նես իսկապէս յօժարակամ խաչարարձութիւն և Տիրա-
 կան քաղցրաձայն հրաւիրանաց սիրողարար հեռեղու-
 թիւն, և վիմափորութեան ժամանակի յիշատակութեան
 արձանագիրն կարդալով՝ զոր փորագրած են առաջնակարգ
 յաջակողմեան միջնասեան արեւմտեան երեսն սկսեալ
 վերնախարսխէն, և տեսնելով որ այգօրինակ չնաշխար-
 հիկ Աստուածպաշտութեան գովելի և գեղեցիկ յառ-
 կութեանց տէրն պայազատ իշխանին Պռոշայ դիւցազն
 Պապաք որդին է, կստիպիս ի սիրոյ սրտիդ վերստին
 նորանոր գոհութեամբ բարեբանել մեծին Պռոշայ ան-
 մահ անուէր, ըստ որում՝ ինչպէս նա ինքն կրթելով
 իւր անձն ճշմարիտ Աստուածպաշտութեան մէջ, ի մարմ-
 նի քաղաքավարուել է միշտ առաքինի կինօք, նմանա-
 պէս իւր հարազատ որդին իբրև Աստուածածագիկ շա-
 ռաւիդ վերընձիւղելով՝ համանման բարեպաշտութեանց
 հօրն մեծին Պռոշայ, ցոյց է տուել իւր հոգևոր գեղեց-
 կութիւնն բարեաց գործով և առաքինական առատա-
 պարզե պտղովք, զարմանագործ հնարակերտութեամբ
 տալով վիմափորել այս հրաշափառ ընդարձակ Ճամատու-
 նը, որ ունի չորս հատ միանման միապաղաղ խարսխա-
 ւոր բոլորչի միջնասիւներ և ութն հատ կիսաբոլոր որմնա-
 սիւներ, երկու երկու՝ դէպ արեւելք և արեւմուտք, և եր-

կու երկու՝ հիւսիս և հարաւ, կամարաց ծայրերն միջ-
նասեանց վերնախարսխաց գլխներէց իբրև դարձուածք
յաջ և յահեակ իջնելով որմնասիւնների վերայ, իբրու-
պարարարձած են ժամատան թանձրամարմին յարկը. միջ-
նասեանց կամարաց վերեն քառանկիւն խորշաձև փորելով՝
գմբէթի ներքին նիստը բաւականաչափ լայնացուցած են,
և վերեն հեղհեատէ քաղելով ու մէջ տեղն մի կամար
թողնելով՝ աւարտած են մինչև միջակետի քառակուսի
լուսամուտը, բացի հարաւային արևելեան և հիւսիսային
որմնասեանց յարկերէց՝ զորս պատշաճապէս զեղեցիկ զը-
րուադած են. մնացեալ տեղերն անդրուադ են, արևելեան
որման ճակատին բաց ի մանր խաչերէց. նաև վիմափորած
են խիստ չքնաղակերտ քանդակներով ութն հատ մեծա-
ղիւր խաչեր, որոց երեք հատից յաջմէ և յահեակէ կըտես-
նուին մարդկան հաստ բազուկներ ձեռքերին բռնած մէկ
մէկ փոքրիկ խաչեր. սոցա առաջին կան քանի մի գերեզ-
մանք ննջեցելոց, որոց մէկի վերայ միայն կայր տապանա-
ղիւր, զոր օրինակ. « Այս է հանգիստ պարոն Մէհրիկի »:

Դամատունն չունի երբէք սեղան Պատարագի կամ
վէմբար. սորա բարձրութիւնն սկսեալ գմբէթի կիզ-
րոնամիջի լուսամտէն ցյատակն է քսան և ութն կանգուն,
լայնութիւնն՝ հարաւէն դէպ հիւսիս տասն և եօթն քայլ,
և երկայնութիւնն՝ արևելքէն դէպ արևմուտք տասն և
ութն քայլ:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՎԻՄՍՓՈՐ ԸՆԴԱՐՁԱԿ ԺԱՄԱՏԱՆՍ՝

Առաջին դասու յաջակողմեան ձեջնատեան արեւմտեան
էրեւին:

“Մեզնականութեամբն Աստուծոյ ես
“Պապաքս 14) որդի Պուաւոյ և ամուսին իմ
“ընտանեացան փորեցաք զձամատունս յինք-
“նաբուն վիմաւ յիշատակ հոգոց մերոց, և
“զաւակ մեզ անմահ ի հալալ արդեանց
“մերոց և եղև առաջնորդութեամբ Տէր
“Մարգարի), • թվ. 21, 12:

Առաջին դասու յաջակողմեան ձեջնատեան արեւմտեան էրեւին:

“Ա. • սուրբ նշան տէրունական, Սիմէոն
“վարդապետի լեր պահապան, հոգոյ նորա
“պատսպարան, և յանցանացն քաւարան,
“որ ետ պարզևս անանցական, եկեղեցոյս
“սուրբ Վեղարդեան, զասմաւորքս հրաշա-
“զան, զարդարեալ բանիւ Աստուածական,
“իւր յիշատակ անջնջական, և բխ. • միշտ
“յաւիտեան, պայծառութիւն տանից լըր-
“ման բոլոր ամաց հանդիսարան, զոր ըս-
“տացայ բազում բաղձմամբ ի զուարճու-
“թիւն նորոգ մանկանց. բերեալ տանէն), :

Յիշատակեալ վիմափոր ընդարձակ Ժամատան նեղ սրահէն դուրս գալով ու դրան աջակողմէն բարձրանալով վերև դէպ ի քարաժայռն, ապա նորա երեսօքն յետս դառնալով դէպ հարաւ մինչև վիմափոր եկեղեցեաց հարթա-յատակ տանիքն, կան այն տեղ դարձեալ երկու հատ մանրաձև վիմափոր խորաններ՝ միմեանցից հազիւ ինն քայլ հեռաւորութեամբ, բայց մի կարգի մէջ. մինը է ամբողջ վիմափոր, ուր ներս կմանուի հարաւային դրանէն նախ և յառաջ փոքրիկ սրահակը, ապա նորա միջէն առանձին դռնակով բուն իսկ խորանը, զոր խիստ մաքուր և գեղեցիկ վիմափորած են. ունի վէմքար Պատարազի իւր խորհրդանոցովն և մի հատ փոքրիկ բոլորշի լուսամուտ դէպ հարաւ, և սրահակի դրան հանդիպահայեաց հիւսիսային որման վերայ կայ վիմափորութեանն ժամանակի հետեւեալ արձանագրութիւնն. «Ի թվ. 210. Պրի-
 «գորէս և Արթանէս եղբարք որդիք Մխիթար Սարգա»
 «զմատուռնս փորեցաք յիշատակ մեզ և ննջեցելոց մերոց
 «յիշեցէք յաղաթս ձեր», :

Իսկ միւս վիմափորի հարաւային որմն կոփածոյ քարից կրաշաղագ շինած է, և նոյն կողման դռնակէն կրմանուի ներս ուղղակի վիմափոր խորանը, որն փոքր ինչ երկայն և պտուտիկ է, ունի վէմքար Պատարազի իւր խորհրդանոցովն, և մի հատ փոքրիկ լուսամուտ դէպ հարաւ. արտաքուստ դրան ճակատին կամարաձև փորագրած են հետեւեալ անթուական արձանագրութիւնն «Քրիս-
 «տոս ողորմեսցի Աարապեաին և իւր ծնողացն և եղբար-
 «ցրն ամէն», :

Գեղարդայ հոյակապ Տաճարի արևելեան հիւսիսային կողմն գրեթէ կից անկեանը՝ կայ փլած շինուածոց պատնէշ, ապա կամարակապ յարկ կից քարաժայռին, որոյ յատակէն տասն և երկու կանգուն սանդղով բարձրանալով վերև, դէպի յարկն, քարաժայռի արևմտեան երեսին վիմափորած են մի դռնակ, որից ներս կմանուի ուղղակի միջին վիմափոր խորանը. սորա յաջմէ և յահեկէ կան վիմափորած միանման երկու խորաններ ևս. ունին վէմքարեր պատարագի խրեանց խորհրդանոցներովն, միջին խորանի հիւսիսային որման վերայ՝ զոր կհամարուի ճակատ յաջակողմեան խորանի դրանն, փորագրած են հայկական թիւն այսպէս. «Ի Թովն ՈՂ», և փոքր ինչ ցած նոյն որման մէջ տեղն կայ այսպէս. «Մմենասուրբ երրորդ», միջին խորանի արևմտեան դրան ճակատին արտաքուստ կայ հեռեկալ արձանագիրս. «Սուրբ Գրիգոր Հայոց Լուսաւորիչ»:

Երբային արեւ վիմափոր եկեղ. ժամաստան և ճապարանայն խորանաց:

Սոցա արտաքին երևութից երբէք հեռուէն չ'է կարելի կարծել թէ քարաժայռերի մէջերն կան այս օրինակ զարմանակերտ վիմափոր եկեղեցիք, ժամաստուն կամ խորաններ, եթէ չ'լինի առանձին ցոյց տուող ծանօթ անձրն. բայց բազմաթիւ մեծագիր վէմ խաչերն՝ զորս հիանալի քանդակագործութեամբ, է որ՝ փորած են քարաժայռերի երեսներին, և է որ՝ տեղ տեղ կանգնեցուցած են, գեղեցիկ հտաքրքրութիւն զարթուցանելովն մար-

դոյս մէջն ու ցանկալով տեսնել և հասկանալ նոցա ի՞նչ անուանով վիմափորելու և կանգնացնող պատճառներն, քարաժայռին մօտեցած ժամանակն յանկարծ կհանդիպիս վիմափորած դռներին, և հետևաբար ներս մտնելով ու տեսնելով սխրագործ արհեստակերտութիւններն, հոգեկան լցեալ ուրախութեամբ վաղձան կըղնէ իւր գեղեցիկ հետաքրքրութեանը:

Պարիսպ լանայ Պեղարդայ:

Մենաստանիս պարիսպն՝ դոր կիսակոփ կրամած քարերով հաստատապէս բարձրացուցած են, հարաւային կողմէն հարիւր տասն և հինգ քայլ երկայնութեամբ ըսկսելով՝ որոյ տակէն խոխոջալով կանցնի Մզատ գետն, և եօթանասուն քայլ լայնութեամբ արևելեան և արևմտեան կողմերից քառակուսի կղառնայ բարձր դէպ հիւսիս, ապա ձորի հիւսիսային լանջակողմովն հաւասար դրից երկայնութեան հարաւային կողման շրջապատելով՝ պարսպի երկու ծայրերն աւարտած են կից արևմտեան քարալեռանը, որտեղ կան ի հուռց վիմափորած քանի մի սենեակներ. վանուցս այս պարիսպն ունի իւր շրջապատն չորս հատ բուրգեր, մին արևելք, մին հիւսիս, մինն հարաւային կողման մէջ տեղն և մին է արևելեան և հարաւային անկիւնը. ունի երեք հատ դռներ, մի մի դէպ արևելք և հիւսիս և մի կամարսկապ մեծ դուռն դէպ արևմուտք, որտեղից է համարեա սովորաբար հասարակաց մուտք և ելքն. սոյն դրան ճակատին արտաքուստ քանդակագործած են երեք հատ գեղեցիկ խաչեր և փորագրած են շինութեան ժամանակի արձանագիրն հանդերձ Հայկական թուականաւն այսպէս. «ԹՎ. ՌՃ՝ԾԼԷ. շի-

«նեցան դարվազէս անտեսատունի վերին կողմն շրջապա-
 «տիս առաջնորդ Ղանէլարան վարդապետի որ է նորա-
 «բողբոջ որ է սա ի շառաւիղէն Պռոշ իշխանին որ է եղ-
 «բօր որդի Ղաւիթ*) վարդապետի, : Պարսպի արևելեան
 որման կիսէն սկսեալ մինչև հարաւային որման վերջին
 ծայրը միջին կողմն, պարսպին կից կարգաւ շինած են կա-
 մարակապ կրամած կոփածոյ քարից հանդերձ կրկնա-
 յարկներովն տասն և եօթն թուով սենեակներ**), մի
 կամարակապ անտեսատուն իւր ներսի մառանովն, և մի
 հատ նոյնպէս կամարակապ մարագ, և ինչպէս մարագի
 դուռն նմանապէս բոլոր սենեկաց յետին կողման լուսա-
 մուտներն կրացունին պարսպի միջից դուրսն դէպ արևելք
 և հարաւ, իսկ առաջին կողման լուսամուտներն կրացունին
 պարսպի մէջն ներսին կողմն դէպ արևմուտք և հիւսիս. կայ
 հիւսիսային կողմն կամարակապ մի մեծ դուր, բայց ոչ
 պարսպին կից, և մի հատ վիմափոր դուր ևս արևմտեան
 կողմն, որոյ տանիքի վերայ շինած է եղել յառաջագոյն
 կամարակապ սենեակ, բայց այժմ կիսաւեր:

(*) Սա ինքն իսկապէս թաղուած է Աստուածածնի Տաճարի վի-
 մափոր ծամատան մէջն. միայն ներկայ վանահայրն տգիտարար տա-
 պանաբարն իւր բնական տեղէն շարժելով՝ պիտոյացուցել է մենաս-
 տանի հարաւային դրան սալայատակին. կայ վրան տապանագիր այս-
 պէս. «ՅԱՅՐԻ վանս է Ա. հայրենի մուրք ի ցեղէն սորա. Ա յս է ցե-
 «ղէն իշխանաց Պռոշայ, այս է հանգիստ Գաւիթ աստուածարանու-
 «թեան վարդապետի որ է շինող Աստուածածնի ծամատան կա-
 «ռուցողի Ծամեայ նա վախճանի երթալ առ տէրն ամենի ո՛վ
 «ըք տառիս հանդիպեսցէ լի սրտիւ ողորմի տայցէ. թվ. ՌՃԾԳ:

(***) Յիշատակեալ սենեակներից է որ միմեանց մէջ երկու կամ
 երեքն շինած են, բայց մեք մի մի հաշուեցինք, ըստ որում ինչպէս
 երևի՝ յետոյ խառնած են միմեանց:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՎԻՄՍՓՈՐ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱՅԱՆՆԻ

ԱՐՏԱՔՈՅ ՔԱՆ ԶՊԱՐԻՍՊՆ ՎԱՆԱՑ ԳԵՂԱՐԴԱՅ:

Մենաստանիս պարսպի արևմտեան կամարակապ զը-
րանէն դուրս գալով՝ ուղղակի սորա հանդէպը վաթսուն
քայլ հեռաւորութեամբ կայ պատնէշ, որոյ վերայ կաես-
նուի հնութեան նշմարանք. մի ծայրն կցած է վերէն քա-
րալեռանը և միւս ծայրն գնացած է զառ ի վայր ձորը.
քարալեռան արևմտեան երեսին վիմափորած են կրկնա-
յարկ եկեղեցիք. ներքին յարկն կբաղկանայ միմեանց մէջ
վիմափորած երեք հատ խորաններից, որոնք ունին վեմ-
քարեր պատարագի իւրեանց խորհրդանոցներովն. նաև
մի մի փոքրիկ լուսամուտներ՝ որոնք կբացուին դէպ արև-
մուտք. նմանապէս միջին խորանի դռնակն դէպ նոյն կողմն
կբացուի. իսկ յաջմէ և յահեկէ եղած խորանները դեմ
առ դեմ կբացուին միջին խորանը. սորա հարաւային որ-
ման վերայ կայ ներքուստ հեռակեալ արձանադրութիւնն
և եթ. «Մ՛վ պատարագողքս զՄովսասն և զՀազարդեղն
յիշեցէք, : Սոյն խորանաց կից կան միմեանց մէջ վիմա-
փորած բաւականին մեծութեամբ երկու սենեակներ, որոց
դռներն արևելք և արևմուտք կբացուին: Իսկ վերնայարկ
եկեղեցին՝ որ կբաղկանայ հինգ խորանից վեմքարերով
պատարագի և իւրեանց խորհրդանոցներովն, վիմափորած
են յանուն ամենասուրբ կոյս Աստուածածնի, և արև-
մտեան և հարաւային որմունքն շինած են կրամած կո-
փածոյ կարմիր քարից, որոց դրսի երեսներն քանդակա-
գործ գեղեցիկ խաչերով և թռչնոց պատկերներով վա-
յելչապէս զարդարել են, և ինչպէս արձանադրութիւնքն
կարդալով՝ ո՛չ թէ վիմափորութեան ժամանակինը՝ այլ

հոգեցատուր յիշատակիք պարզեողներինը, կստուգենք որ յիստան փարէ աւելի յառաջ է վիմափորած քան զշինութիւն մեծահոգի Մենաստանին Պեղարդայ. բայց արեւմտեան դրանէն ներս մտնելով, հարաւային որման վերայ լուսամտի մօտն կտեսնես եկեղեցւոյս նորոգութեան ժամանակի արձանագրութիւնն հանդերձ հայկական թրուականաւն այսպէս. «Ի թվիս 21, նորոգեցաւ սուրբ Աստուածածինս,» :

Սորա նորոգութեան թուականն դարձեալ երէստան ասօժ յառաջ կգտնենք քան զժամանակն վիմափորութեան ընդարձակ յամատանն Պապաքայ որդւոյ մեծին Պռոշայ. եկեղեցին ունի մէկ դուռն և երեք լուսամուտք դէպ արեւմուտք և մի լուսամուտ հարաւային կողմն, և ինչպէս եկեղեցւոյ հարաւային որմն կիսով չափ, նմանապէս մի կարգի մէջ գտնուած շատ վիմափոր խցեր՝ որոնք եղած են բնակարան հրեշտակակրօն անձնուրաց միանձուքների, 1840 թուի մեծ երկրաշարժին խաղառ վրածին, որոց միմեանց վերայ կուտակած մեծամեծ կտորներն դեռ ցայսօր հաւաստի վկայք են այն աշխարհաւեր ցաւալի արկածիցն. և արտաքուստ եկեղեցւոյ արեւմտեան երեսն բովանդակ լցուցել են հոգեցատուր յիշատակաց արձանագրութիւններով, սկսեալ հիւսիսային անկիւնէն մինչև դրանը ձախակողմն հետևեալ կարգաւ :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԻՄՓՈՐ
ԵԿԵՂԵՑՈՅՆ.

Արեւմտեան հիւսիսային անկիւնն :

«Ես Տիրամուկն ետու ի սուրբ Աստուածածինս ի դահեկան և Սպասաւորքս

«խոստացան ի տարոջն ՚՝ աւր ժամ, Ե
«ինձ և Ե, իմ ծնողացն»:

«Բնծայք եկեղեցւոյս որ ի Նորագա-
«ւիթ զոր ետուն Վանիէլի եղբարք ի
«սուրբ եկեղեցիս ի պատկին Չաղացն. Վ
«աւր ժամ, Ե, աւրն ի եղբաւրն Սխի-
«թարա ազգական իւրեանց ետ զայգին իւր
«Վ աւր ժամ իւր հող»:

«Ի թվ. ՈՒ. ես Տէր Ստեփաննոս 15)
«Եզուանից կաթուղիկոս եղէ միաբան
«սուրբ ուխտիս Ե, յրի վանաց յառաջնոր-
«դութեան հաւրն Վրիգորի, և ետու զԸնդ-
«րէի Եռաքելոյ նշխարհն և սուրբ նշան և
«ճննդոց Յովհանն» և բնակիչք տեղոյս խոս-
«տացան ինձ, զտաւն փոխման Տիրամաւրն
«Վ նա» աւուրսն յամենայն եկեղեցիս պա-
«տարագել զՔրիստոս»:

«Ես Եռուտիկ ետու ի զահեկան ի
«սուրբ Եստուածածնիս ի տարոջն ՚՝ աւր
«ժամ, Ե, աւրն ինձ, Ե, աւրն ազգին»:

Նոյն որման Տեղաւորն:

«Ի թվ. ՈՒ.Օ. ես Ստեփաննոս կուտ-
«կեանց ետու զիմ հայրենի հողն զքարա-
«փաւղոց, ետու ի սուրբ ուխտս յառաջ-
«նորդութեան հաւրն Վրիգորոյ Վ աւր

«Ժամ ի տարոջն Ստեփաննոսի որ և խառ-
 «նեցաւ ի մարեմտոյն մեծաւ աշխատու-
 «թեամբ, Բ աւր ժամ Մարեմտոյ, Գ
 «աւրն հաւրն ու Գ աւրն մաւրն և Բ աւր
 «Սիրախտին:

«Ես Ուրբաթ Կաւայտկեցի հող այգոյ
 «ետու և Ղրագալուցի զատկի Բ աւր ժամ
 «իմ եղբ:

«Ես Գոլս և Կրեանո տանուտեարքս
 «և պարոնայքս ի ժամ մահուան Գուլիս
 «գիր յղարկեցաք և զհայրն կոչեցաք և նա
 «իւր քահանայիւք և Եպիսկոպոսովքն հա-
 «ղորդեցոյց և ի գերեզմանահանգոյց տո-
 «ւաք զինկեալքն իւր ընծայիւքն ի Ե.Յրի
 «վանս. Ե աւր ժամ Գոլնի Ե Ա.արգինա
 «Պատրիին:

«Ի թու" ԽԹ. Քրիստոսասէր իշխանաց
 «իշխանքն Օ.աբարէ և Իվանէ վերստին
 «դարձոյց զջուրն ամառնամատակի Եշ և
 «ուրբաթի ի սուրբ ուխտս զԵ" աւրն որ է
 «ուրբաթ և բնակիչք սորա խոստացան
 «զԵ.ւագ խորանս սուրբ Եստուածածնի բո-
 «վանդակ տարին պատարագել զՔրիս-
 «տոս յանուն նոցա:

«Ես Պատրիկս ետու ի սուրբ ուխտս Ի
 «դահեկան և Սպասաւորքս խոստացան ի
 «տարին Ե աւր ժամ ով կատարէ աւրհնի

«ի Քրիստոսէ: | Ես Աորիկա ետու Ա դա-
 «Տեկան և սորա ետուն Վ աւր ժամ, Ե
 «ինձ, Ե Շէրէշահի, Ե Երեմիայի որ խա-
 «փանէ դատի:

«Ես Ազիզս սնեալ ի տուն Խուժլու
 «խաթունին և Պուռոյ ետու Ի դահեկան
 «և Սպասաւորքս խոստացան ի տարին Ե
 «աւր ժամ որ խափանէ մերոց պարտա-
 «կան է»:

Նոյն որման լուսամտի վերևն:

«Ես Շաքար բէկ որդի Աբէլեայ ի թվ-
 «ՌԵ միաբանեցաք սուրբ Ատուածածնիս
 «և սուրբ Առասաւորչիս և սուրբ Վեղար-
 «դիս կանգնեաց զՍաչս սուրբ բարեխոս
 «ինձ և ծնողացն»:

Երեմիայի որման որսի ճակատի շրջապատն:

«Արկրպագութեամբ սուրբ նշանիս ըզ-
 «Սխիթար քահանայս յաղաւթս յիշեցէք»:

Նոյն որման յախակողմն, խաչքի վերևն:

«Ես Ջաքարէ սնեալ ի սուրբ Ատու-
 «ածածնիս նորոգեցի զԱտուածածինս
 «... Տալալ արդեանց իմոց և գնեցի զդատա-
 «ւորի հողն Ի դահեկանի և զխողայ խոյ-

«տերն Արթուր ի Հասանայ խ դահեկանի
 «ետու ընծայք սուրբ Աստուածածնիս և
 «Սպասաւորքս խոստացան Ռ աւր ժամ,
 «Ե ինձ Ե Մամբանոյս որ զայս հայրենիքս
 «այս է եկեղեցոյս հանցէ ՅժԻ հայրա-
 «պետաց նդոված է,»:

Այն արշաւադրո-ւեան փակի խաչի պատրաստութեան վերայ:

«Սուրբ խաչս բարեխաւս հայր Գրի-
 «գորին և ծնողացն իւր,»:

Հարստային հողման փլած համարի շրջանակի վերայ:

«Շնորհիւ Աստուծոյ Վար-
 «դաբուտ նահսդեւ ի սուրբ
 «ուխտիս խ դահեկան Արթուր գիւղի հողն
 «Շուշան զալու այգին և խոստացան»,»:

ԱՌԱՋՆՈՐԳԻ ԱՅՐԻ ՎԱՆԱՅ ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԳԱՅ.

է Բա-ն Հայոց

Տէր Գրիգոր, յաւուրս սորա զայ ի սուրբ
 ուխտս Այրի վանաց Աթողիկոսն Ա-
 զուանից տէր Ստեփաննոս և տայ նշխար
 սրբոյ Առաքելոյն Անդրէի, զսուրբ Աշանն
 և զծննդոց Յովհա:

ՈՂ

Տէր Բարսեղ միայնաւոր, յաւուրս Թաղա-
 ւորաղնոյն Օսթարէի և Իվանէի շինէ
 զհրաշափառ Տաճարն սրբոյն Գեղարդայ:

ՈՒԳ

Տէր Մարգար, յիշատակեալ ի վեր անդր
յընդարձակ վիմափոր ժամատան յար-
ձանագիրս Պապաքայ որդւոյ բարեպաշ-
տին Պռոշայ:

211

Չաքարիայ միայնաւոր, տեսնի յարձա-
նագիրս Տաճարին ի հիւսիսային կողմն
մերձ աւազանին, բայց անթուական:

Տէր Յովհաննէս, յիշատակեալ ի յիշատա-
կարանի Աւետարանի միոյ յամի Տեառն
1475:

Տէր Աստուածատուր Ապիսկոպոս, այր ե-
ղեռնագործ և փնասիչ հայրենեաց, որ
ընդ համանմանեացն իւրոց ընդ Մեղքի-
սեղէկ Աթողիկոսի և ընդ չարաբարոյ
Մանուէլ Ապիսկոպոսին շաւուց – թա-
ռայ զնաց յԱսպահան քաղաք առ Շա-
հապան և երեր զնա ծանու զօրօք ի
շայաստան աշխարհ, որով և պատճառ
կորստեան եղև անթիւ անմեղ բազմու-
թեանց յամի Տեառն 1603:

Պաւլիթ Ապիսկոպոս ի տոհմէ Պռոշ իշ-
խանին, որ եկաց յԱռաջնորդութեան ի
1635 ամէ ց 1675 ամն:

Ստեփաննոս Ապիսկոպոս, եղբայր վերնոյն,
այր գիտնական, եկաց յԱռաջնորդու-
թեան յամն չորս, և ի յերկրաշարժու-
թեան յամի 1679 եղև ընդ փլատակաւ
եկեղեցւոյն անապատին սրբոյ Անանիայ
Առաքելոյ որ յԱրևան:

Վաւիթ Ապիսկոպոս, եղբօր որդի վեր-
նոյն այն է Վաւիթ Ապիսկոպոսի, անմի-
ջապէս զինի սորա. սոքա երկոքեան ի մի-
ասին յիշատակին ի յիշատակորանի
Յայսմաւուրի միոյ եղելոյ ի զրանոցի
Մայր Աթոռոյ սրբոյ Լշմիածնի ի թուին
Հայոց:

ՌՆՂԵ

Պետրոս վարդապետ Ջահկեցի, յիշա-
տակեալ ի Ջամբռ անուանեալ մատե-
նին Հայոց ՌՆՂԲ, ցՌՆՂԱ, յամի
Տեառն 1740:

Ղունկիանոս վարդապետ, յիշատակեալ ի
նոյն Ջամբռ անուանեալ մատենի:

Տէր Օհան վարդապետ Հին Նախիջևա-
նեցի, այր աշխատասէր, հրամանաւ Յով-
հաննէս Բ Վաթողիկոսին Վարբեցւոյ
կարգի վանահայր ի 1840 ամի և թափէ
զՏաճարն ի վերջին ցաւալի ամայութե-
նէ, առնէ զինչ ինչ նորոգութիւնս, հաս-
տատէ առ պարսպաւ վանուց զպարտէզ,
տնկէ զմրգաբեր ծառս, զարդարէ զեկե-
ղեցին զանազան հողեցատուր յիշա-
տակօք նուիրելօք ի բարեպաշտօն ժողո-
վրոց Տփխիսու. ապա կարինեղեալ յա-
նարդար և ընչաքաղց ընթացից ոմանց հո-
գևոր իշխանաւորաց թողու զվանս, երբե-
մըն գնաց ի Տաթև, յետոյ եկեալ ի հայ-
րենիս իւր ի Նախիջևան կնքէ զաղցաւոր
կեանս իւր և զնի ի Քեօհնաբարայ կոչե-
ցեալ հասարակաց Հայոց հանգստարանի:

Մարտիրոս վարդապետ Արղարշապատ-
ցի, ընկերակից և գործակից վերնոյն, յետ
նորա կալով զամս չորս, վաղճանի ի 1844
ամի և դնի առ որմով հարաւային դրան
Գեղարդայ վանուց:

Միքայէլ վարդապետ Չամօյեանց Տփիսի-
սեցի, յաւուրս երկարատե վանահայրու-
թեան սորա յաւելան առ կալուածս վա-
նուցն իբրև սեփականութիւն՝ Գողթ,
Վիւրաքեանդ և Թարաբաշ գիւղորայքն,
որպէս ցուցանեն ձեզ կալուածագիրքն որ
ի գրքոջս, եղև նորոգութիւն տանեաց
Տաճարին, շինեցաւ դժուարագնայի ճա-
նապարհն վանուց ի դիւրութիւն բարե-
պաշտ ուխտաւորաց:

Եղիշէ վարդապետ Եմատունի, օգնական և
գործակից նորին:

Պօղոս Եպիսկոպոս Մալեսսեան և գոր-
ծակից նորա Յովհաննէս վարդապետ Տա-
թևացի:

Ստեփաննոս վարդապետ մահտեսի Խսկեան-
դարեան:

Ռափայէլ վարդապետ Շիրակացի շուշ-
տակ, և գործակից նորա Պետրոս Եբե-
ղայ Եյվազեան Եխալցիսեցի. յաւուրս
սոցա շրամանաւ Արբազնակատար կա-
թողիկոսին ամենայն շայոց Տ. Տ.
Գեորգայ Գ. կառուցաւ ի նորոյ հոյա-
կապ Աննական դպրոց մի, յորմէ վանքն
զուրկ էր ի սկզբանէ անտի. հանին մե-

Տաւ աշխատութեամբ զառուս, շինեցին
զմի ջրաղաց ի Գողթ զիւղ:

ԿԱԼՈՒԱՆՔ ԱՅՐԻ ՎԱՆԱՅ ՍՐԲՈՅՆ ԳԵՂԱՐԴԱՅ
ՆՈՒԻՐԵԱԼՔ ԻԲԱՐԵՊԱՇՏԻՑ:

Էրեւնէն Հայոց

Իշխանաց իշխանքն Ջաքարէ սպասաւա-
րըն և Աթաբէկ Իվանէն վերստին դար-
ձուցանեն զջուրն Ամառնամատակի ի
սուրբ ուխտն Այրի վանաց:

ՈՒԹՅ

Ստեփաննոս Կուտկեանց տայ ի դուռն
սուրբ ուխտին Այրիվանաց զհայրենի
հողն զՔարափողոցն:

ՈՒՕ

Սեփանուն բարեպաշտ իշխանն Պոռչ դան-
ձաղին առնէ ի տերանց աշխարհի սուրբ
ուխտս Այրի վանից լերամբ և դաշտաւ
և ամենայն կաղնութեամբ, և տայ յիշա-
տակ ի դուռն սուրբ ուխտին Այրի վա-
նաց զՕղջաբերդն և զԲերդաղն և ըզ-
Գերեզմանոց:

ՉԼԻ

Պարոն Ջուժէ և պարոն Արզաբէկն տան
ի դուռն սրբոյն Գեղարդայ զհայրենի
ժառանգութիւն իւրեանց զայգին և ըզ-
պարտէզն:

ՈՒԸ

Անխաւանք:

Իշխանաց իշխանն տիեզերակալ Աթաբէկ
Իվանէն տայ սուրբ Աթուղիկէիս զզիւղն
Բերդաղ իբրև լուսացու:

Մխիթար որդի Գրիգորի տայ ի դուռն
սրբոյ Աթուղիկէիս զՎ ժանն փոքր Ձի-
թեհանքի:

Խաչատուր անուռն ոք տայ սուրբ ուխտիս
զայդի մի:

Ատոմ և ամուսին իւր Աբբա ընծային
Այրի վանացն զտունն իւրեանց որ յԱրե-
ւան:

Ուսըռն անուռն ոք միաբանի սուրբ ուխ-
տիս և ի յիշատակ ծնողացն տայ զՎառ-
նոյ խոսանն:

Պարոն Բուրթէն և ամուսին իւր Խամ-
բէկն տան ի վախմ ի դուռն սրբոյն Գե-
ղարդայ զայդի մի և զմի պարտեղ:

Գանիէլ և եղբարքն և իւր ազգական Մը-
խիթարն տան ի յիշատակ սուրբ ուխ-
տիս զմի տուն որ ի Աորագաւիթ, զՊատ-
կի ջրաղացն և զմի այդի:

Ուրբաթ Աաւատիեցի տայ զհող այգւոյ
իւրոյ:

Ջաքարէ բարեպաշտ ոք գնէ զՎատաւորի
հողն զՍողայ խայտերն Արթղոյ ի Հասա-
նայ և ընծայէ ի դուռն սուրբ Աստուա-
ծածնի:

ՊԱՏՃԷՆՔ ՌՍԵՐԷՆ ԿԱԼՈՒԱԾԱԳՐՈՅ ԳԻՒՂՕՐԷԻՑ ԱՅՐԻՎԱՆՈՒՑ
ՀԱՆԳԵՐԶ ՀԱՅ. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ:

Լ՛իտա տասնա յօսեմ սօտ՛ յաճիճստոց փեբրալ յ յօսմոյ
ճեմ Զրիվանսկոյ Գուբերնի յիտել յորոճ Զրիվանի Գուբերնսկի Տեկ-
րետար յակօվ Իվանօվ սնն՛ Կիգրանօվ յրօճալ յն օսնալիս յուր-
նալնոց յօսնալնոց Կաւկազսկոց Կոմիտե յօտ՛ 26 Մայ յմիւն-
սոց 1849 յորոճ Կուսօճայիս յտւրճեմնոց յ յ-տի ճեմ յունյ, Ար-
մյանսկոյ Կեգարտսկոյ Մոնաստիրոյ ճօսալիսեա յմի՛ յօ կուչեյ կր՛-
փօստի սօւրճիւմնոց յ Զրիվանսկոյ Միւնոց Տուճի 15-ոց Օկտյաբր
1848 յորոճ յա Ն 92, տրի Ախչի Մուլկա յեմլի յզ ճեմնի Կօխտ՛,
սօստոյալ Զրիվանսկոց Միւնոց յ Զանգիբասարսկոյ Մալստի, կա-
օ յա յա ճեմնի Կօխտ՛ ցրանիչիտա ս՛ յօմոյ ստորոն յեմլոյ յրի-
նաճեալոց Մոնաստիրոյ Կեգարտ, ս՛ ճրոցոյ յօ ճեմնի Եաշկարնի
նիճեոյ օսեոյ ճորոցոյ յ յօմնոց յաչաեմնոց Մաշաճ Ալի
Եուլաց՛ յն յրօտիւն յորոճ Կօշա սանկար՛, ս՛ ճրօտեոյ յօ յեմլի
Գեմնի Ալի Մարճան յրի յօմնոց կանեմնոց յնօւնալիս յոճճանի,
ա ս՛ յօ ճրօտեոյ յօ յեմլի յրինաճեալոց ճեմնոց Արտիզի ճիւնոյ
յա ճիւնոց սեմճեալ սեմ յրուբլեյ սեբեբրսմ. յն յրօճ յե սեցօ յի-
սե օնաչեննոց տրի Ախչի Մուլկա յեմլի յզ ճեմնի Կօխտ՛ յնոց
նոց մոյո յն յրօճան, յն յաճօճեն, յն յն յ յա կալիս յ կր՛փօստիս
նոց յուրճիւմնոց. Ա եւճե կո յն օստե յա օնոց յստալիս
տօ յա յն սնճիճնիկոց մոց ճօլնոց Արմյանսկոց Մոնաստիրի Կեգարտ յ
Երեմոնախօվ օրօ յօ յօ յաճիչալ յն յն ճօ կալիս յ յիւնոց յստե
տօմ յն ճօճալիս, օ յնալիս յն յե կուչեյ ճօցօրնոց ճիւնոց
եւճե յտալիս յօ յաչկանի յօսնիլի (360 ստ):

5 Կոմա ստա յա օ յօսնիստիս յ 1164 յ 1166 ստա յ 10 կոմա
սուճօ Գրաճանսկիս յաչօնոց յճանիս 1842 յորոճ յրի սեմ յրօճա-
ւոց յ Երեմոնախօվ Կեգարտսկոց Մոնաստիրի Միկաելոյ օչաչալնոց.

Վերոգրեալ երեք -իւնոց Գողթ յիւնոց յաճալիս յաճալիս սր-
րոցն Գեղարդոյ 277 մանէլ յարճալիս յ սյուրան յրամն յ Վանաչօրէ

որոյն Գեղարդայ Միքայէլ վարդապետէ լիովին ստացայ, որում և
 ըստ ամենայնի վերոգրեցն ստորագրեմ Գուբերնսկի Սեկրետար
 Յակոբ Յիւրեանց

У сей купчей свидѣтелями были,
 վիսյէ՛ Երևանցի Օհանէ՛ս Եղիսյէ՛անց
 վիսյէ՛ Փիլիբո՛ւս Մ. Ուրախէ՛անց .

Купчую сію писалъ писецъ Караетъ Теръ-Антоновъ, 1850
 года февраля 8 дня купчую сію совершить по законамъ
 Секретарь Стрельдицкій.

1850 года февраля 8 дня сія купчая у крѣпостныхъ дѣлъ
 Эриванскаго Губернскаго Суда на гербовомъ листѣ 90 копѣчнаго
 достоинства писана и въ книгу подлинникомъ подъ № 10 записана
 съ немъ четырехъ процентный пошлинъ 11 р. 8 коп. Актовымъ
 3 руб. на припечатаніе въ Сенатскихъ вѣдомостяхъ объявленіи 3 р.
 и на пересылку оныхъ 3 копѣйки а всего семнадцать рублей оди-
 надцать копѣекъ сер. взыскалъ и купчую сію совершивъ выдалъ
 надсмотрщикъ Макашевъ.

Թարգմանութիւն :

1850 ամի 8 ն փետրվարի բնակիչ Երևան քաղաքի
 Երևանայ նահանգի Նահանգական Վարտուղար (Губер-
 нскій Секретарь) Յակոբ Յովհաննիսեան Տիգրանեանց վա-
 ճառեցի ըստ օրագրական կարգաւորութեան Աովկասեան
 Ամիրսեանի 26 Մայիսի 1849 ամի, բարձրագոյն Հաստա-
 տութեամբ 5 ն Յունիսի Հայոց վանուցն Գեղարդայ, ինձ
 Հասեալն կարուածազրով Հաստատածն և վերջաւորածն
 Երևանայ Գաւառական Գատարանումը, 15 Հոկտեմբերի
 1848 ամի № 92, երեք ախճայ մուլք Գողթ գիւղիցն՝ որ
 դտանի Երևանայ գաւառի Օւանգիրասարի գաւառիումը:
 Եմբողջ Գողթ գիւղն կսահմանափակի մէկ կողմանէ Գե-
 ղարդայ Աւանքապատկան Հողերովն, միւս կողմանէ Բաշ-

գեառնի զիւղի ներքին հասարակաց ճանապարհաւն և աղբերաւն՝ որ կկոչուի Մաշտ-ալի-բուլաղ, հանդէպ լերին Առշասանգեառ կոչեցելոյ, երրորդ կողմանէ հողերիցըն Ալեմարդան զիւղի մօտ ջրանցաքարն՝ որ կկոչուի 'Նօվտաշ, չորրորդ կողմանէ Արթիզ զիւղի պատկանեալ հողերից, գնահատութեամբ 277 մանէթ արծաթոյ. նախ քան զայս, վերոյիշեալ երեք ախճայ հողն Գողթ զիւղի ոչ ոքի չ'եմ ծախած, ոչ զբաւ զբած և ոչ մի կալուածազրով հաստատած. իսկ եթէ մէկն կսկսի միջամուխ լինել այդ հողերին, այն ժամանակն ես և իմ ժառանգներն պարտական են պաշտպանել՝ ինչպէս Հայոց Գեղարդայ վանքն՝ նմանապէս և վարդապետներն, և չ'թոյլ տալ այդ հանգամանքներումը մնաս կրեն նոքա: Սոյն կալուածազրի մէջ պայմանադրած զինն նշանակել առանց թազցնելու, մաքս պահանջելու համար (360 յօդ.):

Ճերրորդ հատորում մաքսի կանոնադրութեան 1164, և 1166 յօդուածներն, 10 հատոր քաղաքական օրինաց, տպեալն 1842 ամի, սորանով՝ վաճառողին և Գեղարդայ վանուց վանահայր Միքայէլ վարդապետին յայտնուած են:

Վերոյ գրեալ երեք ախճայ Գողթ զիւղից վաճառեցի վանաց սրբոյն Գեղարդայ 277 մանէթ արծաթոյ, և այսքան զբամն ի վանահօրէ սրբոյն Գեղարդայ Միքայէլ վարդապետէ լիովին ստացայ, որում և ըստ ամենայնի վերոյգրեցն ստորագրեմ,

Գոթերնսկի Սելբեֆար Յակովբ Տիգրանեանց:

Այս կալուածազրոյ վկայքն էին,

Վ. Կայե՛ Յովհաննէս Աղլապարեանց

Վ. Կայե՛ Գեղեղոն Մ. Աղամալեանց

Կալուածազրիս այս գրեաց

Գրադէր Ապրապետ Կէր Անսոնեան:

1850 ամի 8 ն Փետրվարի կալուածագիրս այսվերջա-
ւորել ըստ օրինի

Սեկրետար Ստեբերեյի:

1850 ամի 8 ն Փետրվարի սոյն կալուածագիրն կա-
լուածագրական գործերում Արևանայ Աստանական
Պատարանի գրուած է 90 կոպեկանոց արժողութեամբ
զրուադաւոր թղթոյ վերայ, և բնագրով գրքումը ընդ հա-
մարաւ 10 ն հաշուած է 4% մաքս՝ 11 մանէթ 8 կոպէկ,
Ակաի համար 3 մանէթ, Սենատսկի Վերոյնստումը յայ-
տարարութիւն տպելոյ համար 3 մանէթ, նորա ուղար-
կելու համար երեք կոպէկ, ընդ ամենն 17 մանէթ 11 կո-
պէկ պահանջեաց, և այս կալուածագիրն վերջաւորելով
յանձնեաց:

Վերահայեցող Մաղաշեանց:

ВОДНЫЙ ЛИСТЪ.

Тысяча восемь сотъ пяти десятаго года мая пятаго дня, Управ-
ляющій Зангибасарскимъ участкомъ Поручикъ Амирхановъ, согласно
указу Эриванскаго Губернаго Суда отъ Февраля 1850 года за №
387- мь ввелъ во владѣніе Зангибасарскаго участка Кегвартскій
Монастырь Купленнымъ онымъ отъ Эриванскаго жителя Губернскаго
Секретаря Якова Тигранова Тремя Ахчами мулька земли изъ де-
ревни Кохтъ по купчей крѣпости совершенной въ ономъ Судѣ 8
Февраля сего года За № 10 - мь. За двѣсти семдесятъ семь рублей сереб-
ромъ цѣною; каковая земля граничится: съ Востока; съ одной сто-
роны землею принадлежащею Монастырю Кегарту; съ другой отъ Де-
ревни Башгарни. нижнею общею дорогою и родникомъ называемымъ
Машадъ Али булагъ, напротиву горы Коша сангаръ, съ третьей
отъ деревни Али Марданъ природнымъ камнемъ именуемымъ новгдашъ,
а съ четвертой отъ земли принадлежащей Деревни Артызъ кана-
вою подъ названіемъ Аноджъ — архъ, и при передачѣ сего имѣнія во
владѣніе Кегвартскаго Монастыря притензій состороны жителей объ-

явлено не было, въ Удостоверніе чего и постановленъ сей Актъ за подписею моею и находившихся при семъ понятыхъ староннихъ людей съ выдачею Копію съ сего вводнаго листа Кегвартскому Монастырю. Означеннымъ Имѣніемъ вовладѣніе ввелъ Управляющій Зангибасарскимъ участковымъ управленіемъ Завѣдующій Зангибасарскимъ участкомъ Капитанъ №

При вводѣ во владѣніе находились жители ниже поимѣнованныхъ. Селеніи Вашкаринскій .

Старшина Вартапъ Кеворковъ.

Авакъ Папановъ.

Алагверди Абраамовъ.

Минасъ Сакоевъ.

Вартапъ Мануковъ.

Ованесъ Мануковъ.

Сахо Кеворковъ.

Манукъ Сакоевъ.

Сахо Оганесовъ.

Արտիշտակ գրեալ անձինքն զիր չի գիտելով՝ ի տեղի նոցա ստորագրեցի Տէր Յովննէս Գրգորեան:

Жители Деревни Артизъ, Кохтъ и Али Марданъ.

Баба Касумъ оглы.

Абасъ Али Маммадъ оглы.

Салманъ Сулейманъ оглы.

Ахверды Али оглы.

Абдулла Маммадъ оглы.

Каграманъ Имамверди оглы.

Мамадъ Сулейманъ оглы.

Имамъ верди Сулейманъ оглы.

Мамадъ ханъ Сулейманъ оглы.

Гусейнъ ханъ Наби оглы.

Мирза Калбалай Абдулла оглы.

Гасанъ Маилъ оглы.

Ստորագրեցի Գրգորեան Սեփեհուր Յովննէս Տէրման:

Покушникъ *Սեփեհուր Յովննէս Վանանյան* և *անհայր ստորագրեցի*

Գրգորեան:

1852 года, Декабря 22 дня, что сия копія съ вводнаго листа суть съ подлиннаго токоваго листа дѣйствительно, въ томъ подлинномъ моимъ и прилаженіемъ казенной печати удостовѣрно.

Начальникъ Зангибасарскаго Участка Маркаровъ.

Տեղի կ'ըրոյ

Յանյնողական Բերի:

